# Ազգ

AZG
armenian newspaper

Սեպտեմբեր 9
1992
Շաբաթ

օրաթերթ
Բ տարի, թիւ 84 (176)
գինը՝ 2 ռ.

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիչ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 CPFR SU


## Այսօր Ռաֆֆի Հովհաննիսյանը մեկնում է Թուրքիա

Այսօր Հայաստանի արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը կմեկնի Թուրքիա՝ Եւրոպական խորհրդի երկրների արտգործնախարարների խորհրդակցությանը մասնակցելու համար:

Ինչպես երեկ հայտնեցին «Անարֆ»ի թղթակցին ԱԳՆ լրատվական կենտրոնում, Ստամբուլում կքննարկվի Եւրոպական համագործակցության երկրների՝ նախկին ԽՍՀՄ-ի հանրապետությունների հետ հարաբերությունների հարցը:

Որոշ տեղեկությունների համաձայն, Հայաստանը ցանկանում է Եւրոպական խորհրդում դիտորդի կարգավիճակ ստանալ, սակայն Թուրքիան խոչընդոտում է դրան: ■

## Երեկ Մոսկվայում հանդիպեցին Խասբուլատովն ու Արարքցյանը

Երեկ Մոսկվայում տեղի ունեցավ Ռուսաստանի եւ Հայաստանի Գերագույն խորհուրդների նախագահների աշխատանքային հանդիպումը: Ռուսլան Խասբուլատովը եւ Բաբկեն Արարքցյանը քննարկեցին փոխադարձ մտահոգությունների ծավալների կտրուկ կրճատումը եւ, ընդհանուր առմամբ, երկու պետությունների միջեւ տնտեսական կապերի թուլացումը: Հայաստանի խորհրդարանի ղեկավարն իր գործընկերոջ ուշադրությունը հրավիրեց երկաթուղիների շրջափակման եւ վառելանյութի հետ կապված լարված իրավիճակի վրա: Նրա խոսքերով, Երեւանում մեկ լիտր բենզինն արժե 60 ռուբլի: ■

## Հայաստանը 60-ականների մակարդակին

Պետվիճակոմի տվյալներով, Հայաստանի՝ Ադրբեջանի հետ սահմանակից 12 շրջաններում 1992 թվականի առաջին կիսամյակում արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալը կազմել է 54,4 տոկոսով, որը 3-4 կետով բարձր է հանրապետության մյուս շրջանների անկման տեմպից: Ամենաբարձր անկման տեմպերը գրանցվել են Նոյեմբերյանի շրջանում՝ 65,7, Արարատում՝ 67,9, Վարդենիսում՝ 66,1, Սիսիանում՝ 69,8, Մեղրիում՝ 66,2 տոկոսով:

Անկման գլխավոր պատճառներից մեկը, տրանսպորտի հարցին զուգահեռ, ուժանյութի պակասն է: Այս տարի, նախորդ տարվա համեմատությամբ, էլեկտրականության արտադրանքը պակասել է 9,5, դիզելի ներմուծումը՝ 56.6 տոկոսով, էլեկտրականության սեփական ծախսերն էլեկտրակայաններում պակասեցվել են 29,1 տոկոսով, դրա փոխարեն 35 տոկոսով ավելացել են ընդհանուր օգտագործման ցանցի կորուստները: Վերը նշված բոլոր պատճառները հաշվի առնելով, էլեկտրաէներգիայի ընդհանուր օգտագործումը հանրապետությունում պակասել է 27,9 տոկոսով:

Իրադրության այսպիսի փոփոխությունը հանրապետությունը կարող է հասցնել 60-ական թվականների մակարդակին: ■

## Մարտակերտում հակառակորդը դուրս է մղվել կարեւոր բարձունքներից

*Մարտունու շրջանում ադրբեջանցիները նոր կորուստներ են տալիս*

Ինչպես հաղորդում է Ղարաբաղի «Նորություններ» գործակալությունը, անցած օրը Մարտակերտի շրջանում հայկական ինքնապաշտպանական ուժերը վճռական գործողություններ են ձեռնարկել ադրբեջանցիների զավթած Մեհմանա, Դրմբոն եւ Վաղուհաս գյուղերում տեղակայված ադրբեջանական կրակակետերը լռեցնելու համար: Հայկական ուժերին հաջողվել է դուրս մղել ադրբեջանցիներին մարտավարական կարեւոր նշանակություն ունեցող մի քանի բարձունքներից:

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը ոչ միայն այս մասին ոչինչ չի հայտնում, այլեւ հերքում է այն տեղեկությունները, ըստ որոնց մի քանի օր առաջ հայկական ուժերը Մարտակերտի շրջանում ազատագրել են 3 գյուղ:

Ղարաբաղի «Նորություններ» գործակալությունը հաղորդում է նաեւ, որ սեպտեմբերի լույս 8-ի գիշերը հրանոթներից եւ «Գրադ» կայանքներից հրետակոծվել են Մարտունու եւ Հադրութի շրջանների մի շարք բնակավայրեր: Կան վիրավորներ եւ ավերածություններ:

Ինչպես հաղորդում է «Անարֆ» գործակալությունը, սեպտեմբերի 7-ի առավոտյան ադրբեջանական բանակի կազմավորումները նոր գրոհ են ձեռնարկել Մարտունու շրջանի Սոս, Մաճկալաշեն եւ Ճարտար գյուղերի ուղղությամբ: Լայնածավալ հարձակմանը նախորդել է այդ գյուղերի ուժգին հրետակոծությունը, որի ժամանակ գյուղերի վրա ընկել է ավելի քան 600 արկ: Այնուամենայնիվ, ինչպես հայտնում է ԼՂՀ ինքնապաշտպանության շտաբը, հարձակվողներն այս անգամ եւս շոշափելի պարտություն են կրել՝ կորցնելով մի քանի տասնյակ զինվոր: Վճռական գործողությունների շնորհիվ տեղի ինքնապաշտպանական ուժերին հաջողվել է նույն օրը երեկոյան թշնամուն ետ շպրտել սկզբնական դիրքերը: Հայկական կողմից զոհվել է 4 եւ վիրավորվել 17 մարդ: Տուժածների մեջ կան նաեւ խաղաղ բնակիչներ:

«Ինտերֆաքս» գործակալությունը, հենվելով Ղարաբաղի «Նորություններ» գործակալության տվյալների վրա, հաստատում է այդ լուրը:

Մինչդեռ, ինչպես հայտնում է Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը, ադրբեջանական օդուժը Ղարաբաղի հարավում ոչնչացրել է մի քանի զրահամեքենա եւ ոչ ավել, ոչ պակաս, հարյուր զինվոր: ■

## Երեւանը մեծ հույսեր չի կապում Նազարբաեւի միջնորդության հետ

Հայաստանի նախագահի ներկայացուցիչ Դավիթ Շահնազարյանը հաղորդեց, որ սեպտեմբերի 1-ից մինչեւ 7-ը ադրբեջանական կողմը ավելի քան 60 անգամ խախտել է Հայաստանի սահմանը: Դա վկայում է այն մասին, որ Ադրբեջանը իրականում չի ձգտում դադարեցնել լայնածավալ ռազմական գործողությունները սահմանում: Անդրադառնալով Ղազախստանի միջնորդական գործունեությանը, Շահնազարյանը նշեց, որ *«մեխանիզմները չափազանց թույլ են, չկա համեմատաբար արդյունավետ գործող աparատ, չկա նույնիսկ շուրջօրյա հեռախոսային կապ: Ուստի իրավիճակը դեռ ոչ-ոքի առիթ չի տալիս լավատեսության համար»:*

Սակայն Երեւանում նախագահ Նազարբաեւի ներկայացուցիչ Հասան Կաժոկովն ավելի լավատեսորեն է տրամադրված: Նրա կարծիքով, լարվածությունը հայ-ադրբեջանական սահմանում փորձ-ինչ մեղմացել է: Կաժոկովը հույս հայտնեց, որ կողմերը որեւէ համաձայնության կգան, ինչը հնարավորություն կտա սեպտեմբերի 13-ին եւ 14-ին աշխատանքային խմբերի՝ Ալմա-Աթայում կայանալիք հանդիպման նախօրեին փոքր-ինչ առաջ շարժվել:

*«Մեր գործը պարզաբանելը չէ, թե ո՞վ է մեղավոր,* նշեց Կաժոկովը, *այլ մեզ հանձնարարված առաքելության սահմաններում նոյասել Ալմա-Աթայում ձեռք բերած պայմանավորվածությունների իրագործմանը»:* Ընդ որում, Ղազախստանի նախագահի պատվիրակը ընդգծեց, որ ճիշտ չէր լինի սահմանափակվել միայն այդ հարցով, այլ անհրաժեշտ է անհապաղ սկսել Ղարաբաղում ստեղծված իրավիճակի քննարկումը: Նա չբացառեց այն հնարավորությունը, որ Ղարաբաղ կուղարկվի Նազարբաեւի ներկայացուցիչը: ■

## Թուրքիայի նախագահ Օզալը չի դատապարտել Վրաստանին

Թբիլիսիում Թուրքիայի գլխավոր հյուպատոսությունը հանդես է եկել հայտարարությամբ, կազմված սեպտեմբերի 2-ին «Նեզա» գործակալության հաղորդած այն տեղեկության հետ, թե իբր սեպտեմբերի 1-ին Թուրքիայի խորհրդարանի նիստում նախագահ Թուրգուտ Օզալը «խիստ քննադատել եւ դատապարտել է Վրաստանի քաղաքականությունը Աբխազիայի նկատմամբ, եւ կոչ է արել Սեւծովյան ավազանի բոլոր երկրներին սաստկանցնել աբխազ ժողովրդին»: Վրաստանի արտգործնախարարությունը հրած հայտարարության մեջ Թուրքիայի հյուպատոսությունն այդ հաղորդագրությունն անվանել է *«հերյուրանք, որը նոյասակ ունի սվնր գցել Թուրքիայի եւ Վրաստանի բարեկամական հարաբերությունների վրա եւ մոլորեցնել հասարակական կարծիքը»,* եւ հայտնել, թե սեպտեմբերի 1-ին Օզալը *«ընդհանրապես խոսք չի ունեցել խորհրդարանի նիստում»:* ■

## Տաջիկստանի հակամարտությունն արտաքին գործոնների հետեւանք է

Ուզբեկստանի նախագահ Իսլամ Քարիմովը գտնում է, որ Տաջիկստանի տարածքում տեղի ունեցող հակամարտությունը չի հանդարտվում արտաքին միջամտության պատճառով: Որոշ շրջանակներ արտասահմանում փորձում են միմյանց դեմ հրահրել Միջին Ասիայի տարբեր ազգերի ներկայացուցիչներին, հայտարարեց նա սեպտեմբերի 7-ին Տաշքենդում տեղի ունեցած մամուլի ասուլիսում:

Աֆղանստանից Տաջիկստան ոչ միայն զենք են ուղարկում, այլեւ նշում այն թիրախները, որոնց դեմ այդ զենքն անհրաժեշտ է կիրառել, ավելացրեց նախագահը: Տվյալներ կան, որ Կուրգան-Տյուբեում եւ այլ բնակավայրերում տեղի ունեցած արյունալի դեպքերին մասնակցում են աֆղան մուջահեդներ:

Հիշեցնելով, որ Ուզբեկստանում բնակվում են բազմաթիվ տաջիկներ, իսկ Տաջիկստանում՝ ուզբեկներ, Ի. Քարիմովը հայտարարեց. «Ես թույլ չեմ տա արյունալի թշնամություն սերմանել տաջիկների եւ ուզբեկների միջեւ»: Ուզբեկստանի նախագահը նշեց, որ անհրաժեշտ է կանխել կոնֆլիկտի ընդլայնումը Միջին Ասիայի ամբողջ տարածքով, որտեղ բնակվում է 50 միլիոն մարդ:

Քարիմովը դիմեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին անհապաղ հատուկ հանձնաժողով ուղարկելու խնդրանքով, որը կուսումնասիրի գործերի իրավիճակը եւ անհետաձգելի միջոցառումներ կձեռնարկի այդ շրջանում խաղաղություն հաստատելու նպատակով: ■

## Թեչերը վերականգնում է Լոնդոնի եւ Բոնի կապերը

Նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի հրավերով «Բրիբիշ պետրոլեում» նավթային ֆիրմայի պատվիրակության հետ միասին ոչ պաշտոնական այցով Բաքու էր ժամանել Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Մարգրեթ Թեչերը: Բարձր մակարդակով հանդիպումից հետո նա ներկա էր «Բրիբիշ պետրոլեում» ընկերության եւ հանրապետության կառավարության միջեւ պայմանագրի ստորագրմանը: Արարողությունից հետո բրիտանական ֆիրմայի նախագահ Ջոն Բրաունը լրագրողներին հայտարարեց, որ Ադրբեջանն ունի նավթի հսկայական պաշարներ, որոնք կարող են մեծ օգուտ բերել հանրապետությանը:

Սեպտեմբերի 7-ին տեղի ունեցավ ընդունելություն, որի ժամանակ նախագահ Էլչիբեյը նշեց Մ. Թեչերի անգնահատելի անձնական ներդրումը սառը պատերազմի ավարտի գործում: Նա ընդգծեց կարմիր կայսրության ռազմական մեքենային դիմակայելու ԱՄՆ-ի եւ Անգլիայի դերը: Էլչիբեյը հայտնեց, թե Ադրբեջանը կմիանա եւրոպական քաղաքակիրթ պետությունների հանրությանը եւ հույս հայտնեց, որ Եւրոպական համայնքը կճանաչի Ադրբեջանը որպես Եւրոպայի մաս: ■

## *Իսրայելը միջանկյալ պայմանագիր է առաջարկում Սիրիային*

Վարչապետ Յիցխակ Ռաբինը հայտարարեց, թե իր կառավարությունը պատրաստ է անջատաբար Սիրիայի հետ միջանկյալ պայմանագիր կնքել երկու երկրների միջեւ անվտանգությունը ապահովելու համար, մինչ խաղաղության խոսակցությունները կշարունակվեն արաբ-իսրայելյան «կնճռին» համընդհանուր լուծում գտնելու առաջադրանքով: Դեռեւս հայտնի չէ, թե սիրիական կողմը ինչ արձագանք է տվել Ռաբինի այս առաջարկին: Արաբ-իսրայելյան խոսակցությունները այս օրերին վերջին կվերսկսվեն Վաշինգտոնում: ■

## *Հարավ Աֆրիկայում ծայրահեղ լարվածություն*

Նախորդ օրը Հարավային Աֆրիկայի՝ անվանականորեն անջատ սեւամորքների Սիսայ երկրի Բիշոն մայրաքաղաքում ցուցարարների վրա կրակ բացելուց հետո երեկ լարվածությունը զգալիորեն հասավ այնտեղ, եւ դը Կլերկի ու Նելսոն Մանդելայի կողմնակիցները մեղադրեցին իրար նախորդ օրվա ջարդը կազմակերպելու հանցանքով: Աֆրիկյան ազգային կոնգրեսի կազմակերպած հակակառավարական ցույցին, որին մասնակցում էր ավելի քան 80 հազար մարդ, ցուցարարների վրա հանկարծակի բացված կրակից սպանվել են 28 եւ վիրավորվել առնվազն 200 մարդ: Երեկ կայացած հուղարկավորության ընթացքում Աֆրիկյան ազգային կոնգրեսի ներկայացուցիչները հայտարարեցին, թե կազմակերպված ջարդի պատասխանատուներին չպատժելու դեպքում Հարավ-Աֆրիկյան հանրապետությունում այլեւս սպիտակամորթ կառավարության եւ սեւամորթների միջեւ հարցերը խաղաղ լուծելու ոչ մի հույս չի մնա: ■

## *Կուբայում ատոմակայանը չի կառուցվի*

Ֆիդել Կաստրոն հայտարարեց, թե 1 միլիարդ դոլար ներդրում կատարելուց հետո իր երկիրն այժմ ստիպված է կանգնեցնել ատոմակայանի շինարարությունը: Նախկին խորհրդային գործընկերները, որոնց նախագծով էր կառուցվում այն, Կաստրոյի ասելով, այնպիսի պայմաններ են դրել կուբացիների առաջ, որ «մենք չունենք ուրիշ տարբերակ, քան կանգնեցնել շինարարությունը»: Կուբան մեծ հույսեր ուներ, որ ատոմակայանի շնորհիվ կլուծեր էլեկտրաէներգիայի խնդիրները: ■

## *Ռուսական զորքերը Լիտվայից կհանվեն մինչեւ 1993 թ. օգոստոս 31-ը*

Երեկ Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովը եւ Լիտվայի իր պաշտոնակից Աուդրյուս Բուտկյավիչուսը այդ մասին հաստատեցին գրաֆիկ: Ստորագրվեց դուրս բերման հետ կապված տեխնիկական արձանագրություն, ինչպես նաեւ ռուսական զորքերի զինծառայողների վարձատրության կանոնների մասին համաձայնագիր: Ինչպես հայտնեցին Կրեմլից, ռուսական զորքերի դուրս բերման վերաբերյալ երեկ երկու երկրների միջեւ որեւէ պայմանագիր չի ստորագրվել: Բորիս Ելցինի անունից մամուլին հայտնեցին, թե պայմանագիրը պարզապես պատրաստ չէր եւ դեռեւս մեկ ամիս կդահանջվի այն մշակելու համար: ■

digitised by A.R.A.R.@

*Ռուսաստանի խորհրդարանում հայկական «ֆրակցիան» ներկայացված է երեք հոգով: Անատոլի Շաբաղին Հայաստանում լավ գիտեն: Հարցազրույց ունենալու խնդրանքով ես դիմեցի Եւգենի Համբարձումովին, բայց նա ասաց, թե օրերս հանդիպել է հայ լրագրողներից մեկի հետ եւ պատրաստ է նոր հանդիպում ունենալ միայն մի քանի ամիս հետո: Միխայիլ Հարությունովը համաձայնեց մի պայմանով, որ կարտահայտի իր անձնական եւ ոչ պատգամավորի կարծիքը: Միխայիլ Հարությունովը 62 տարեկան է: Ծնվել է Գորգմիում: Տեխնիկական գիտությունների թեկնածու է: Ռուսաստանի խորհրդարանի մարդու իրավունքների կոմիտեի գաղթականների գործերի ենթակոմիտեի նախագահն է:*

# Համապատասխանեցնենք մեր շահերը

*Հարցազրույց Ռուսաստանի խորհրդարանի անդամի հետ*

**- Պրն. Հարությունով, ես կուզեի մեր զրույցի թեման դարձնել ռուս-հայկական հարաբերությունները: Թող զարմանալի չթվա, բայց ուզում եմ անմիջապես հարցնել. Ռուսաստանի խորհրդարանը կարելի՞ է հակահայկական համարել:**

- Ոչ, ավելի ճիշտ կլինի ասել, որ նա հայամետ չէ: Բանն այն է, որ «առաջինն» սկսելով անկախության պայքարը, հայերն իրենց վրա ուղղեցին կոմունիստական քարոզչության ողջ թույնը: Դրա հետեւանքներն այսօր զգալի են, այդ թվում նաեւ մեր խորհրդարանում, եւ անդրադառնում են խիստ բացասաբար:

Բացի այդ, շատ պատգամավորներ աղոտ պատկերացում ունեն Հայաստանի, եւ այնտեղ ու Ղարաբաղում կատարվող իրադարձությունների մասին: Իսկ ճշմարիտ պատկերացում կազմել՝ ելնելով տեղի թերթերից ու հեռուստահաղորդումներից, անկարելի է:

**- Հատկապես հեռուստահաղորդումներից: Հայաստանից տրվող տեղեկությունների մեծ մասը դարձել է, թող ոչ ոք չնեղանա, յուրօրինակ ողբասացություն՝ ինչպես բովանդակությամբ, այնպես էլ հաղորդման տոնով: Այստեղ շատերն ասում են՝ առաջ բողոքում էիք, թե չեն թողնում անկախանաք, հիմա էլ դժգոհում եք, թե չեք կարողանում անկախ ապրել: Երբեմն էլ այնպիսի տեսարաններ են ցուցադրում, որոնցում հայերը գնչուներից չեն տարբերվում: Վերջին հաշվով ո՞վ է քաղաքականություն վարում խղճահարություն առաջացնելու դիրքից:**

**Բայց չշեղվենք մեր թեմայից: Ադրբեջանցիներն ամեն տեղ ազդարարում են, թե հայերն ուժեղ լոբբի ունեն Ռուսաստանի ղեկավար կառուցվածքներում: Դա, օրինակ, զգացվո՞ւմ է խորհրդարանում:**

- Ես կասեի, խորհրդարանում ավելի շուտ կա հակահայկական լոբբի, որը պարզապես հակահայկական է, բայց ոչ ադրբեջանամետ: Ուրիշ հարց է, որ խորհրդարանում իրոք կան հայերի շահերը պաշտպանողներ, ինչը չէի ասի հարեւան հանրապետության առընչությամբ: Գաղտնիք չէ, որ Հայաստանի օգտին հանդես են գալիս Համբարձումովը, Ստարովոյտովան, Շաբաղը, Շելով-Կովեդյաեւը եւ ուրիշներ: Իմ հասցեին նույնիսկ մեղադրանքներ հնչեցին, թե իբր, օգնում եմ հայ գաղթականներին: Խորհրդարանում եւ, նվազ չափով, կառավարության մեջ, իրոք կան հակահայկական ուժեր, բայց նրանց դերը ես չէի չափազանցնի:

**- Գուցե շատ ավելի վտանգավոր է նման տրամադրությունների առկայությունը ժողովրդի, ավելի ճիշտ՝ ամբոխի մեջ, հատկապես Մոսկվայում, Ռուսաստանի հայաշատ վայրերում: Կարդում ես այստեղ կոչված «հոգեւոր ընդդիմության» օրգան «Դեն» (День) թերթը եւ դիշատաղվում նրա հակահայկական աղտեղություններից:**

- Իհարկե, չի կարելի անտեսել այդ ամենը: Բայց վերջին ժամանակներս ավելի շատ տարածված են «ընդհանրացված» հակակովկասյան տրամադրությունները: Շոշափվող հարցն ունի քաղաքական ու կենցաղային հիմք: Ընդդիմությունն ու մութ ուժերը դրանք փորձում են օգտագործել սեփական դժվարություններն արդարացնելու նպատակով՝ հին, փորձված մեթոդ է: Բայց մյուս կողմից էլ կովկասցիներն իրոք առիթներ են տալիս նման վերաբերմունքի համար:

Նրանց, այդ թվում նաեւ հայերի մի զգալի մասն իրեն շատ լկտի է պահում, ասենք, Մոսկվայում: Հենց լկտի, ուրիշ բառ չես էլ օգտագործի: Լավ աղքատ կովկասցիները նաեւ ահավոր ցուցամոլ են, եւ դա՝ միլիոնավոր ռուսների կենսամակարդակի շեշտակի անկման ֆոնի վրա: Եկեք նրանց էլ հասկանանք:

**- Ինչ էլ լինի, ուզում ենք մենք, թե ոչ, Ռուսաստանը շարունակում է բախտորոշ դեր խաղալ հայերիս ճակատագրում: Իմ դիտումներով, Հայաստանում այսօր ստեղծվում է երկու հակադիր միտում: Մի կողմից՝ խոր հիասթափություն Ռուսաստանից, մյուս կողմից էլ, երբ հօդս են ցնդում շատ պատրանքներ, այն բանի ըմբռնումը, որ Հայաստանի գոյության երաշխիքը, այնուամենայնիվ, Ռուսաստանն է:**

- Ես գտնում եմ, որ կանխահաս եւ անիմաստ է Ռուսաստանի վրա խաչ քաշելը: Ավելին, համոզված եմ, որ ռուս-հայկական լավ հարաբերություններն առջեւում են: Երկու պետությունների միջեւ վերջերս կնքված մի շարք պայմանագրեր հավաստում են ասածս: Ռուսաստանն առայժմ զլխովին խորված է իր ներքին խնդիրների մեջ, եւ նրա երկխաղական նոր կողմնորոշիչները, այդ թվում նաեւ Անդրկովկասում, կազմավորման ընթացքում են: Բայց մի բան պարզ է. հակառուսական քաղաքականությունը ոչ մի հեռանկար չունի Հայաստանում եւ Վրաստանում: Բոլորովին վերջերս ես ռուս խորհրդարանականների խմբի կազմում երկու անգամ եղա Վրաստանում՝ Թբիլիսիում, Հարավային Օսիայում եւ Աբխազիայում: Մի՞թե հարեւան հանրապետության ներկա կացությունը դաս չէ հայերիս համար: Ինչի՞ հասավ Գամսախուրդիան իր «հակակրեմլյան» քաղաքականությամբ: Ինձ թվում է, - Հայաստանը մեծ տերությունների մեջ ընտրություն չունի դաշնակցի հարցում: Իմ խորին համոզմամբ, Հայաստանը պետք է գործի մի ուղղությամբ. անի ամեն ինչ, որ իր եւ Ռուսաստանի շահերը առավելագույնս համընկնեն հօգուտ Հայաստանի:

**- Երբեմն կարդում ես հայ մամուլն ու զարմանում: Պեղում են պատմության ծալքերն ու «վեր հանում» ռուսների հակահայկական քաղաքականության «մութ էջերը»: Այդ հոդվածներից շատերին բնորոշ են ոչ թե պատմությունից դաս քաղելու միտումները, այլ անցորության մաղձն ու, կոպիտ ասած, գավառամտությունը, մեզ խաբեցին մոլորեցրին, դավաճանեցին: Է, կարողացանք չխաբվեցի՞նք, չմոլորվեցի՞նք:**

- Հայաստանում երբեք չպիտի մոռանան, որ ամեն մի անխոհեմ հակառուսական ելույթ դամոկլյան սուր է դառնում նաեւ ռուսահայության գլխին, եւ անշրջահայեցորեն խաղալ տասնյակ հազարավոր հայրենակիցների բախտի հետ՝ հանցագործություն է:

Հայաստանի վրա ազդեցության լծակներն այնքան շատ են եւ ուժեղ, որ Ռուսաստանին հակադրվելը դառնում է կատարյալ անմտություն՝ կործանարար հետեւանքներով: Միեւնույնն է, դու նրան ցավ էլ չես պատճառի, էլ ինչու նմանվենք, չվիրավորվենք, Կոլիզվի հայտնի առակի թույլ հերոսին: Քաղաքականության մեջ պետք է միշտ իրատես լինել եւ երբեք չառաջնորդվել զգացմունքներով: Ով՝ ով, բայց հայերն արդեն պիտի համոզված լինեն, որ քաղաքական բառարանում բացակայում են այնպիսի զգացմունքային բառեր, ինչպիսիք են արդարությունը, ազնվությունը, հավասարությունը եւ այլն: Բնականաբար, Ռուսաստանը շրջանից չի հրաժարվի եւ այնտեղ պիտի փնտրի իր շահը, իսկ շահը, թերեւս, միակ կայուն գործոնն է քաղաքականության մեջ: Ուրեմն, կրկնում եմ, եկեք համաձայնեցնենք մեր շահերը:

Հարցազրույցը վարեց
**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ, Մոսկվա**

## Սխալ տեղեկություն մանկական մահացության մասին

**Ձեր թերթի 3.09.1992 թ. 80-րդ համարում տեղ գտած «Մոր եւ մանկան հարցերին առաջնություն» հոդվածում (հոդվածագիր՝ Արմինե Օհանյան) հանրապետությունում մանկական մահացության ցուցանիշի վերաբերյալ տրված է սխալ տեղեկություն: Մասնավորապես, մանկական մահացության ցուցանիշը 1991 թվականի 1-ին կիսամյակում կազմել է ոչ թե 19,2 տոկոս, այլ 15,8 (պրոմիլե՝ յուրաքանչյուր 1000 ծնված երեխայի նկատմամբ) եւ տարեվերջին այն կազմել է 17,3 (պրոմիլե): 1992 թ. 1-ին կիսամյակում այդ ցուցանիշը ոչ թե կազմել է 28 տոկոս, այլ 17,5: Մեկ անգամ եւս նշենք, որ մանկական մահացության ցուցանիշը ողջ աշխարհում հաշվարկվում է յուրաքանչյուր 1000 ծնված երեխայի նկատմամբ:**

**Առողջապահության փոխնախարար**
**Վ. ԴԵՄԻՐՃՅԱՆ**

*«Մոր եւ մանկան հարցերին առաջնություն» հոդվածում բերված մանկական մահացության ցուցանիշները վերցրել ենք քաղխորհրդի առողջապահության վարչությունից: Քաղաքվարչությունից եւ առողջապահության նախարարությունից (փոխնախարար Վ. Դեմիրճյանից) ստացված թվական տվյալների հակասությունը մեզ ստիպեց դրանք կրկնակի անգամ ճշտել: Քաղաքվարչության պետի՝ մոր եւ մանկան հարցերով տեղակալ Թամարա Պաղիեւան վարչության վիճակագրական տվյալների հիման վրա հաղորդեց, իր ասելով ճշգրտված տվյալներ, որոնք էլ մեր կողմից հիմք ընդունվեցին եւ հրապարակվեցին: Քանի որ խնդիրը պարզելու մեր ջանքերն արդյունք չտվեցին, գուցե իմաստ ուներ ներկայացնել երկու կողմի տված տվյալներն էլ՝ հետեւությունները թողնելով ընթերցողին: Ընդունելով այդ հարցում մեր բացթողումը, մեզ մնում է տարակուսանք հայտնել նման կարեւոր եւ դյուրին պարզաբանման ենթակա հարցում երկու նույն գործով զբաղվող հասատությունների ունեցած տվյալների հակասականության կապակցությամբ:*

ԱՐՄԻՆԵ ՕՀԱՆՅԱՆ

## Թող ընթերցողը դատի

Մեծարգո խմբագիր, Ձեր թերթի ս. թ. սեպտեմբեր 8-ի համարում զետեղված է «Չգիտե՞ք ինչ անեք, հետեւեք «Յորդորակներին» փութագրութիւնը (ռեպլիկ): Իմ գրած ու տարածած փաստաթղթից մէջբերելով փոքրիկ բեկորներ, յօդուածագիրը կամայական մեկնաբանութիւններով աղաւաղել է մտքերս:

Յօդուածը, ցաւօք, վարկաբեկիչ երանգ ունի, ինչն էլ ինձ ստիպում է Ձեզանից խնդրել պատասխանի հնարաւորութիւն:

Իբրեւ պատասխան, խնդրում եմ անփոփոխ տպագրէք յօդուածում յիշատակուած «Յորդորակը»: Թող ընթերցողը ի՛նքը որոշի, թէ որքանո՞վ են յօդուածի մեկնաբանութիւնները համապատասխանում իրականութեանը:

**«Ազգ»ի մշտական ընթերցող ու բարեկամ՝ Ռ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ**

*Խմբագրությունն անհրաժեշտ չի գտնում «Յորդորակ»ը տպագրել, դրա «միտք բանին» հարազատորեն արտահայտվել է արդեն Հ.Գ.-ի հոդվածում, մեկնաբանությամբ հանդերձ:* ■

## Ղարաբաղ. եւ մարտնչում են, եւ աշխատում

Այսօր ԼՂՀ մայրաքաղաքում հրետակոծություններից եւ ռմբակոծություններից ավերվել է ավելի քան 250 շինություն, որից կեսը՝ բնակելի տներ: Այդ մասին «Սնարֆ»ի թղթակցին հաղորդեց ԼՂՀ Նախարարների խորհրդի նյութական արտադրության եւ արտադրական ենթակառուցվածքի բաժնի վարիչ Մարսիմ Դանիելյանը: Պատերազմը դժվարացնում է վերականգնողական աշխատանքները: Զգացվում է շինարարական եւ վառելիքա-էներգետիկ, տրանսպորտային միջոցների, աշխատավոր ձեռքերի պակասը: Ամենահամեստ հաշվարկներով, միայն բնակելի տների վերականգնման համար անհրաժեշտ է ավելի քան 130 միլիոն ռուբլի: «Սակայն, չնայած օբյեկտիվ դժվարություններին, շարունակեց Դանիելյանը, Լեռնային Ղարաբաղի կառավարությունը փորձում է օգտագործել ներքին պաշարները Ստեփանակերտի արտադրական ոլորտի կարգավորման համար: Արդեն մասնակիորեն գործում են կոնդենսատորի եւ էլեկտրատեխնիկական գործարանները, մետաքսի կոմբինատը, կոշիկի ֆաբրիկան: Մոտ ժամանակներս նախատեսվում է վերսկսել արտադրությունը կարի ֆաբրիկայում եւ կաթի կոմբինատում»: ■

## Հայաստան-Ռուսաստան. տնտեսական բանակցություններ

ՀՀ կառավարության լրատվական ծառայության հաղորդման համաձայն սեպտեմբերի 7-ին Մոսկվայում տնտեսական համագործակցության բանակցություններ են սկսվել Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ: Քննարկվել են առեւտրատնտեսական համագործակցության, դրամավարկային հարաբերությունների, առեւտրական պայմանակարգի վերաբերյալ համաձայնագրերի: Հայաստանի պատվիրակությունը գլխավորում է փոխվարչապետ Հրանտ Բագրատյանը, Ռուսաստանի կողմից բանակցությունները գլխավորում է Համագործակցության պետական կոմիտեի առաջին փոխնախագահ Վլադիմիր Պոկրովսկին: Բանակցությունները շարունակվում են: ■

## Ստեփանակերտում հաց կլինի

Մոտ օրերս կսկսի աշխատել Ստեփանակերտի հացի գործարանը: Այդ մասին «Սնարֆ»ի թղթակցին հայտնեցին ԼՂՀ պատգամավորության կոմիտեում: ԼՂՀ-ում հաց արտադրելը կապված է մի ճարֆ դժվարությունների հետ: Զգացվում է ալյուրի պակաս, որի պահանջարկն օրական հասնում է 20-25 տոննայի: Քաղաքին արդեն մի քանի ամիս չի տրվում բնական գազ, հեղուկ գազը վերջանալու վրա է: Այսքան բարդ իրադրությունից օգնում են դուրս գալ Հայաստանի համապատասխան ծառայությունները: Մարդասիրական միջանցքով, չնայած՝ անընդհատ հրետակոծություններին, Ստեփանակերտ են հասցվում ալյուր, վառելիք եւ այլ անհրաժեշտ ապրանքներ: ■

## Մամսային նոր կարգ

Մամսային հսկողության նոր գոտին, որը ձգվելու է Ադրբեջանի, Վրաստանի, Ուկրաինայի, մերձբալթյան հանրապետությունների եւ Ռուսաստանի սահմաններով, շուտով կհաստատվի Ռուսաստանի մամսային պետական կոմիտեի կողմից: Դա արվում է Ռուսաստանի կառավարության որոշման համաձայն: Գոտում նախատեսվում է ստեղծել 63 մամսատուն, որոնցից 35-ը՝ Ուկրաինայի հետ սահմանում, 21-ը՝ Մերձբալթիկայի: Ինչպես հայտնեց Մամսային պետական կոմիտեի պատասխանատու աշխատող Վլադիմիր Տոպասովը, դա նշանակում է, որ Ռուսաստանը հրաժարվում է այս երկրների հետ «թափանցիկ սահմանի» սկզբունքից եւ նրանց հետ հարաբերությունները կկառուցի այնպես, ինչպես երրորդ երկրների հետ: Նա նշեց, որ առայժմ հսկողությունը տարվելու է բրդարդեղերի, զենքի, հնությունների եւ հումքի հոսքը կանխելու համար: ■

## Իգական վարժարան Վանաձորում

Սեպտեմբերի 6-ին Վ. Տերյանի անվան թիվ 5 դպրոցում տեղի ունեցավ «Հայուհի» իգական կիրակնօրյա վարժարանի բացումը, որը եզակի երեւույթ է հանրապետությունում:

Վարժարանի տնօրեն Անահիտ Մամուլյանին խնդրեցինք համառոտակի ներկայացնել կրթօջախի առաքելությունը:

«Վարժարանում ուսանելու են 14 տարեկանից բարձր աղջիկներ ու կանայք, որոնք անցնելու են արվեստաբանություն, գրականություն, պատմություն, ազգագրական մշակույթ, էթիկա: Կդասավանդվեն նաեւ օտար լեզուներ, ճարտասանություն, անձնական հիգիենա, տարիքային ֆիզիոլոգիա եւ այլն: Անվճար կարող են ընդունվել 5 եւ ավելի երեխա ունեցող ընտանիքների անդամները, փախստականների, հաշմանդամ ծնողների, ինչպես նաեւ հաշմանդամ երեխաները:

Ելնելով սոցիալ-առաքելությունից, վարժարանը հիմնականում գոյատեւելու է մուծման վարձով եւ հովանավորությունից գոյացած գումարների հաշվին: Մեր նպատակը, ի վերջո, իգական գիմնազիա հիմնադրելն է, որտեղ ուսուցումը կտարվի երեք տարեկանից: Կգործեն նախակրթական, կրթական եւ բարձրագույն դպրոց»:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

## Երեւանում բացվեց կիրակնօրյա հրեական դպրոց

Կիրակի օրը, սեպտեմբերի 6-ին Երեւանի դպրոցներից մեկում պաշտոնապես բացվեց հրեական *Մեխինա* կիրակնօրյա դպրոց, որը պատկանում է Իսրայելի կրթության նախարարությանը: Այն ԱՊՀ երկրներում բացված թվով 23-րդ դպրոցն է: Հանդիսավոր արարողությանը ներկա էին Երեւանի հրեական համայնքի ներկայացուցիչներ: Ըստ մեզ հասած հավաստի տեղեկությունների, դպրոցում կդասավանդեն եբրայերեն, հրեա ժողովրդի պատմություն, կրոն, անգլերեն լեզու: Դասերը կտեւեն երեք ակադեմիական ժամ: Ուսուցիչները կլինեն տեղացի մասնագետներ, իսկ ուսումնամեթոդական գրականությունը կստացվի Իսրայելից: ■

digitised by A.R.A.R.@

*Հայացք կողքից*

# Ես կարող եմ ամեն ինչ գնել, բացի հացից

*Հարավկորեացին Հայաստանի խնդիրների եւ իրենց փորձի մասին*

*«Խանութները դատարկ էին, միայն հաց կար: Դեկտեմբերին հանկարծ շամպայն երեւաց, եւ այնպիսի՞ հերթ էր: Այժմ հակառակն է. խանութներում ինչ ասես կա, բացի հացից: Իսկապես, ես կարող եմ գնել ամեն ինչ, հացից բացի»:*

Հետաքրքիր է երբեմն ինքդ քեզ նայել կողմնակի աչքերով, մտածեցի ես, մինչ իմ զրուցակիցը խոսում էր: *«Այս խոսքը կարելի է որպես վերնագիր դնել»*, բարձրաձայն ասացի, իսկ զրուցակիցս ծիծաղեց. *«Չէ՞ որ դուք ուզում էիք իմանալ, թե երկամյա բացակայությունից հետո ինչ փոփոխություններ են աչքի զարնում: Դա առաջինն էր, եւ գիտեմ, հուսադրող. ուրախ եմ, որ այս ծանր պայմաններում խանութները լիքն են առրանքներով: Սակայն դա բոլորը չէ»:*

Ճիշտն ասած, ես նույնիսկ լավ չէի պատկերացնում, թե ինչի մասին է կարելի եւ պետք խոսել, երբ օրվա վերջին անտաստելիորեն իմ աշխատասենյակ բերեցին «ազգությամբ հնդկաչին մի մարդու» եւ ներկայացրին. *«Դոկտոր Լի Կի Ջին, Սեուլի Սոգան համալսարանից. ֆիզիկոս: Ժամանել է Աշտարակի ռադիոֆիզիկայի ինստիտուտ, կարճալիք համակարգերի բնագավառում փորձի փոխանակման համաձայնության նպատակով»:* Այդքան «սպառիչ» տեղեկատվությունն անակնկալի բերեց ինձ. *«Ասացեք, խնդրեմ, դոկտոր, մի՞թե մեր սարքերը այդքան լավն են, որ դրանց հետեւից գալիս են նույնիսկ Կորեայից...»:* Եթե նա չպատասխաներ էլ, դեմքի բազմանշանակ արտահայտությունը բավական էր: Նա բանավոր էլ հաստատեց, ավելացնելով, թե մեզնից սարքեր գնելով, փաստորեն դրամ են ներդնում մեր գիտության մեջ:

Շատ է գրվել մեր գիտության ծանր վիճակի մասին, որը ոչ այնքան վաղուց առաջավոր դիրքեր էր գրավում աշխարհում: Ասենք, ի՞նչ գրել: Մի՞թե յուրաքանչյուրս էլ ծանոթ թեկնածուներ, դոկտորներ, պրոֆեսորներ ունի, որ դարձել են կոշկակար, առեւտրական եւ այլն:

Մեր վիճակի եւ, մասնավորապես, գիտության մասին տխուր մընթերը պատահական չէ, որ արբնացան կորեացու հետ զրույցի ժամանակ: Ուղղակի ես հիշեցի, որ Կորեան նույնպես դժվարություններ է ունեցել, բայց կարողացել է հաղթահարել դրանք: Մենք ի վիճակի՞ ենք դրան: Ինչու՞ ոմանք կարող են, ոմանք՝ ոչ: Պատահականությո՞ւն է, ընտրյալ վիճա՞կ, թե այլ բան: Ահա այն հարցերի շրջանակները, որոնք եւ մաչելի են, եւ հետաքրքիր: Ավելին, զրուցակցիս «կարճալիք շոշափման» ընթացքում հետաքրքիր մանրամասնություն պարզեցի: Պարզվեց, որ իր հիմնական գործից բացի նա «Սեուլ» շաբաթաթերթից պատվեր է ստացել հոդված գրել Հայաստանի մասին: Ահա այստեղ ծագեց թեմայի շրջանակը՝ «հայացք կողքից»: Կարդալով մեր երկխոսությունը, դուք կհամոզվեք, որ վերեւում գրվածը բնական ձեւ կամ զուգահեռներ անցկացնելու միջոցով խորհրդածություն:

**– Ասացեք խնդրեմ, դոկտոր, կարելի՞ է զուգահեռներ տանել մեր երկրների միջեւ:**

– Թերեւս, այո: 40-ական թվականներից հետո մեր երկրում նույնպես ծանր էր վիճակը. քառասային: Սակայն 60-ականներին մենք լարված, անընդմեջ աշխատում էինք, քանզի նպատակադրվել էինք հասնել բարեկեցության, ձգտում կար: Սկզբում դուք հարցրիք ձեր երկրում փոփոխությունների մասին: Խանութները առաջինն են աչքի զարնում: Սակայն ավելի կարեւոր բան կա: Երկու տարի առաջ ոչ ոք չէր ուզում աշխատել: Հիմա կարծես հակառակն է: Սակայն ոչ բոլորն են՝ իմանում եւ կարողանում. սովոր չեն: Դրանից բացի, միջոցներ եւ հնարավորություններ չկան, բացակայում է ամենակարեւորը՝ աշխատանքի կազմակերպման մոտեցումը: Իհարկե, այս ամենը հասկանալի է, հազիվ լրացել է ձեր անկախության մեկ տարին:

**– Հազիվ...: Սակայն, մյուս կողմից, անցել է մի ամբողջ տարի: Մեզ համար դա շատ է, քանզի թվում է, թե օրեցօր կյանքն ավելի է դժվարանում: Ինչպես՞ եք դուք դա ընկալում, որպես քաղա՞ս, թե կարգավորման միտում:**

– Անկեղծ ասած, ավելի շատ որպես քաղաս, թեեւ դա կարող է միայն կողքից թվալ: Եվ կրկնում եմ, մեկ տարի է անցել:

**– Դուք ասացիք, թե պատերազմից հետո ձեր երկիրը նույնպես քաղսի մեջ էր, սակայն կար նպատակը, որն օգնեց հաղթահարել քաղսը: Մենք էլ կարծես թե նպատակ ունենք, սակայն... Դուք ճգնաժամից դուրս գալու որեւէ ծրագիր ունեի՞ք, ո՞վ էր ստեղծել այն, ո՞րն էր նրա միջուկը:**

– Իհարկե, գոյություն ուներ կառավարական ծրագիր՝ հիմնված մասնավոր անձանց դրամական ներդրումների վրա:

**– Կորեակա՞ն, թե արտասահմանյան:**

– Ե՛վ մեկը, եւ մյուսը: Թեեւ մեզ շատ են օգնել Միացյալ Նահանգները: Մենք, կրկնում եմ, մեծ ցանկություն ունեինք առաջադիմել պետական մակարդակով: Ամենակարեւորը, կային մարդիկ, որոնք հասկանում էին, որ անհրաժեշտ է յուրաքանչյուրին օգտագործել այնտեղ, ուր նա կարող է առավելագույն օգուտը բերել: Մյուս էական գույնը, մեր կառավարությունը առաջադիմական օրենքներ ընդունեց եւ կարողացավ փոխել մարդկանց մտածողությունը:

**– Ձեզ թվում է, որ մենք ա՞յլ ճանապարհով ենք գնում:**

– Ես այնպիսի տպավորություն ստացա, թե այստեղ ոչ այնքան օրենքներն են գործում, որքան «Ամեն մեկն իր համար» սկզբունքը: Բոլորն ուզում են հարստանալ, սակայն միայն մեկ ուղի են տեսնում՝ «առ ու ծախիր»:

Ես հասկանում եմ, որ դժվարություններ ունեք: Առաջին քայլն արել եք՝ անկախացել եք: Այժմ պետք է քայլ առ քայլ ամրապնդել այն: Պետք է նայել առաջային եւ որոշակի քայլեր ձեռնարկել: Իհարկե, դա հեշտ չէ. 5-6 տարի կդահանջվի հասնելու նպատակին, սակայն, քանի որ այն դրվել է, պետք է հասնել: Սա առայժմ չկա: Ցանկություն կա, սակայն չկա «քայլ առ քայլ»:

**– Դուք այդքան բան եք հասցրել նկատել, որովհետեւ դուք բոլորդ նույնպես՞ «քաղաքականացված եք»: Թե՞ ձեր հասարակությունում իշխում է այն սկզբունքը, ըստ որի՝ քաղաքականությունը՝ քաղաքականագետին, գիտությունը՝ գիտնականին եվ այլն:**

– Չգիտեմ, սակայն Հարավային Կորեայում հասարակական կարծիքը մեծ կշիռ ունի: Ինքս մասնակցել եմ ուսանողական շարժումներին: Այսօր էլ ուսանողները բավականին ուժ ունեն հանրահավաքների, ցույցերի միջոցով իրենց դժգոհությունը հայտնելու կառավարությունից: Մեզ մոտ ուժեղ արհմիություններ եւ հասարակական-քաղաքական կազմակերպություններ կան: Այդ պատճառով կառավարությունը ձգտում է հաշվի առնել հասարակության անգիտությունը եւ գործել ժողովրդավարության սահմաններում:

**– Դուք ձեզ իսկական ժողովրդավարական հասարակությո՞ն եք համարում:**

– Առայժմ ոչ, բայց մենք քայլեր ենք անում այդ ուղությամբ:

**– Ի՞նչ խնդիրներ ունեք Հյուսիսային Կորեայի հետ:**

– Մենք շեշտը դնում ենք տնտեսական համագործակցության վրա: Ինչպես գիտեք, մենք հիանալի տեխնոլոգիաներ ունենք: Հյուսիսային Կորեան աշխատուժի շուկա է: Այնպես որ, համագործակցության բնագավառ կա: Այս տարի մենք կընդլայնենք կապերը:

**– Այսինքն, քաղաքական հարցերը լուծում եք տնտեսական միջոցներով: Իմիջիայլոց, Հյուս. Կորեա–Հրվ. Կորեա եւ Հայաստան–Ղարաբաղ հարաբերությունների մեջ դուք նմանություններ չե՞ք տեսնում:**

– Այժմ ոչ: Դա այլ դեպք է: Մեր տարբերակում, Հյուսիսային Կորեայի ժողովուրդը ձգտում է տնտեսական մերձեցման, իսկ կառավարությունը՝ ոչ: Ղարաբաղի դեպքում այլ է:

**– Դուք պատվեր ունեք հոդված գրել Հայաստանի մասին: Ինչո՞վ է դա պայմանավորված:**

– Գլխավորը՝ հետաքրքրություն կա ձեր նկատմամբ: Ինչպե՞ս դա կդրսեւորվի՝ կախված է ձեզնից: Հարավային Կորեան, ինչպես հիմնականում ողջ աշխարհը, գիտեր միայն ԽՍՀՄ-ը: Ամբողջ տեղեկատվությունը անցնում էր Մոսկվայով: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո մենք իմացանք մեծ հանրապետությունների (Ղազախստան, Ռուսաստան) մասին, որոնք կարող են ազդել աշխարհի իրադարձությունների վրա: Ձեր մասին... Հիշեք երկրաշարժի փորձը: Հսկայական տեղեկատվություն կար եւ Մոսկվայից, եւ այլ երկրներից: Ամբողջ աշխարհն արձագանքեց: Հետո Միությունը փլուզվեց, դուք չկարողացաք առպահովել տեղեկատվության հոսքը, եւ Լենինականի մասին մոռացան: Նույնն է նաեւ բախումների գոտու շուրջ: Բացակայում է ճիշտ դրվածքով, մտածված գործող տեղեկատվությունը: Ես ուզում եմ Ղարաբաղի մասին գրել, սակայն անգլերեն լեզվով որեւէ տեղեկանք չեմ կարողանում գտնել:

Կրկին վաս զգացի: Այս նախատինքը ես լսում եմ նրանցից, ովքեր ցավակցում են մեզ, ցանկանում օգնել, բայց... Ամենաշատը ինձ ցնցեց դոկտոր Լիի վերջին արտահայտությունը. *«Մեզ մոտ շատերին թվում է, թե Ղարաբաղը կարող է դառնալ երրորդ համաշխարհային պատերազմի պատճառ: Դա սարսափելի է: Մենք ուզում ենք ձեզ օգնել: Տեղեկատվություն է պետք, շփումներ»:* Թվում է, բոլորն են հասկանում դա, մեզնից բացի: Մենք էլ ինչ-որ կերպ հասկանում ենք: Սակայն նրանք ցանկանում են ինչ-որ բան անել, իսկ մենք... ասպասում ենք, թե ինչով կավարտվեն նրանց փորձերը:

ԻԴԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՏԵՍՐԱՎ ԱՎԱՆՅԱՆԻ

## Դպրոցների հայկականացումը շարունակվում է, սակայն...

Երկու օր առաջ լուսավորության նախարարության կոլեգիան, ինքարկելով ռուսական դպրոցներն ասիճանաբար (այս տարի դրանում ընդգրկված են 1-5 դասարանները) հայերեն ուսուցմամբ դարձնելու կառավարության որոշման ընթացքը, ընդգծեց, որ այս հարցում կան հաջողություններ, բայց փիչ չեն նաեւ թերացումները:

Հատկապես չեն գոհացնում բռնագաղթվածների հետ տարվող աշխատանքները: Նրանց մի մասն այս տարի եւս շարունակում է իրենց զավակներին ռուսական դասարաններ փոխադրելու պահանջներ ներկայացնել:

Լուսավորության նախարար Հայկ Ղազարյանը շեշտեց, որ դա դպրոցների որոշ տնօրենների անբարեխիղճ գործելակերպի եւ նախարարության պատասխանատու աշխատակիցների անհետեւողականության արդյունքն է: Միաժամանակ նա նշեց, որ բավարար չեն փախստականների երեխաների հետ միայն դասերի ժամանակ տարվող աշխատանքները: Կոլեգիայի որոշմամբ, նախկին ռուսական դպրոցների հայկական ուսուցման անցած դասարանների համար բացվում են երկարօրյա խմբեր՝ դասապաշտպանությունը եւս ուսուցիչների հսկողությամբ եւ օգնությամբ անցկացնելու համար:

Նախարարը նաեւ ասաց, թե մտադիր է դիմել մայրենիի ուսուցմամբ շահագրգռված բոլոր հասարակական կազմակերպություններին՝ երկարօրյա այդ խմբերում աշխատողներ տրամադրելու եւ անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու խնդրանքով:

Հ. Պ.

## Անտեր թափառականներ

Հասարակական տրանսպորտի այժմյան, բայց ոչ այժմեական գործողությունները, նրա «ինքնագործունեությունն» սիրում են մտածել, թե պետական ունեցվածքի սեփականաշնորհման որոշման ուժի ներքո արդեն մասնավոր անձանց են հանձնվում ավտոբուսները եւ տրոլեյբուսները, քանի որ դրանք հիմա երբեւեկում են ուր կամենան, ինչպես կամենան եւ երբ կամենան, «ճակատներին» ավելի ու ավելի հաճախ երթուղիների համարների փոխարեն կրելով «в парк», «перерыв» մակագրությունները: Իսկ հերթական կանգառում, հերթական անգամ հերթական չլցած փոխադրամիջոցին սպասող մարդիկ իրենց սրտի խորքից հանգամանքների զորությամբ բխած «հուզմունքի խոսքեր» են ուղղում տրանսպորտային միջոցին, նրա վարորդին, նրանց աշխատանքի համար պատասխանատվություն կրող համապատասխան անպատասխանատուներին եւ մտածում, թե ինչպես իրենց «պարկ» հասնեն, ինչպես իրենց ընդմիջումներից չուշանան՝ լավ իմանալով հասարակական տրանսպորտի՝ այդ ամենին նպաստող «քաղաքականությունը»:

Հասարակությանը սպասարկող տրանսպորտն ըստ իր նշանակության եւ անհրաժեշտության պետք է, այսպես ասած, հասարակական ուղղվածություն ունենա, այսինքն՝ հասարակության անդամը կարողանա նրանից օգտվել այնպես, ինչպես ինքն է ցանկանում: Մեզ մոտ թափ է վերցրել «տրանսպորտային այն միտումը», թե ինչպես վարորդին է հարմար, այդպես էլ պետք է հարմար լինի ուղեւորին: Այդ է պատճառը, որ հիմա, ասենք, մինչեւ Նորքի 6-րդ զանգված երթուղի ունեցող տրոլեյբուսը հանկարծ ի լուր ուղեւորների հայտարարում է, թե երթեւեկելու է մինչեւ 1-ին զանգված, իսկ 1-ին զանգված գնացող տրոլեյբուսը երթուղին փոխում է դեպի հավաքակայան: Առանց երթուղային համարի տրոլեյբուսը, ըստ ճանապարհին մնացած ուղեւորների «արժեքավոր» ցանկության, կարող է թողնել իր իսկական երթուղին եւ «փափախ ռեյս» անել: Մի խոսքով, ավտոբուսների ու տրոլեյբուսների իսկական, հաստատված երթուղիները միայն ժամանակավոր ձեւական ուղեցույց են վարորդների համար՝ կախված նրանց քմահաճույքից: Իսկ նրանց ճանապարհի հիմնական ուղղությունը, աշխատանքի ժամը, աշխատել-չաշխատելը կապված է սեփական ցանկության, դրանից բխող անհրաժեշտության, երբեմն նաեւ «փողոց պատվերների» հետ: Այնպես որ, անհրաժեշտության դեպքում բանակցելով որեւէ երթուղու ավտոբուսի վարորդի հետ՝ կարող եք տրանսպորտային այդ միջոցը միաժամանակ դնել ձեր տրամադրության տակ: Ավտոբուսի վարորդը թեեւ կշեղվի երթուղուց, սակայն դրանով նրա՝ օրվա պլանի կատարումը վտանգի տակ չի դրվի, քանի որ «վարձակալողի» վճարած գումարը լրիվ կծածկի այն, դեռ մի բան էլ ավելի: Իսկ կանգառում մնացած ուղեւորը թող մտածի ու հույսով ապրի, թե որտեղից պետք է մի «փափախ» «երազ» կամ՝ «Ռաֆ» հայտնվի, որ իրեն տեղ հասցնի:

Հասարակական տրանսպորտի «բարեխիղճ» աշխատանքից դժգոհ մարդկանց իբրեւ արդարացում հրամցվող վառելիքային, պահեստամասային եւ այլ «հիմնավոր ու օբյեկտիվ» պատճառաբանությունները փողոցների եզրերին, շենքերի ու տների բակերում բնավ էլ ոչ այդ պատճառներով կանգնած ավտոբուսների ու տրոլեյբուսների կերպարանքների հետ համադրվելով կարող են գովազդային տեսահոլովակի հիանալի օրինակ լինել, իսկ որպես բնաբան կարող են վերցվել հետեւյալ բանաստեղծական տողերը՝ «Թափառում ենք փողոցներում, ես քո սիրով, դու՝ ուրիշի...», որոնք ամբողջովին կարտացոլեն հասարակության եւ հասարակական տրանսպորտի միջեւ գոյություն ունեցող հարաբերությունները եւ կբացահայտեն հասարակական տրանսպորտի հակահասարակական էությունը:

ԳԼԳԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

digitised by A.R.A.R.@

# «Վերջին մարդու» իշխանությունը

ՏԻԳՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

***«Գո՛ւյժ, մոտենում է ժամանակը, երբ մարդն այլևս ասող չի ծնելու: Գո՛ւյժ, մոտենում է ամենաչնչին մարդու ժամանակը, որն արդեն չի կարողանալու համահրել ինքն իրեն: Նայեցե՛ք, ես ձեզ ցույց եմ տալիս ՎԵՐՋԻՆ ՄԱՐԴՈՒՆ»:*** **Նիցշե**

***«Հայաստան–Միջին Արևելք» վերլուծական բաժնի ղեկավար, մեր մշտական հեղինակ Տիգրան Հայրապետյանի ստորև տպագրվող հոդվածն անկասկած տարազան մեկնաբանություններ առիթ կտա: Խմբագրության կարծիքով, «Վերջին մարդու» ճակատագրական, գրեթե առասպելական ուժով օժտված կերպարը որևէ կոնկրետ անհատ չէ, այլ ավելի շուտ արժեքների մի յուրօրինակ խտացում, որ ստեղծվել է մեր ժողովրդի համար բազմաբարդ այս ժամանակներում եւ որի պայթուցիկ ուժն անհայտ է, թե ինչի կհանգեցնի: Հեղինակը, գիտակցաբար թե տարերային տվելով, խտացրել է գույները, ազգը կանգնեցրել ճակատագրական երկընտրանքի առաջ, որ ավելի շուտ փիլիսոփայական, գոյաբանական խնդիր է հիշեցնում, քան որևէ քաղաքական գործողության կոչ: Ինչ էլ լինի, կարծում ենք, ընթերցողին կհետաքրքրեն այս ոչ միանշանակ մտորումները:***

Հայաստանում հաստատվել է «Վերջին մարդու» իշխանությունը: Նա առաջ է քաշել միակ ճշմարտության անհաղթ կարգախոսը. «Մենք գտել ենք երջանկությունը»: Եւ «Վերջին մարդուն» հատուկ հաստատակամությամբ իր ճանապարհին ոչնչացնում է ամեն ինչ: Հագեցած բարձրագույն իշխանությունից ստացված անհոգությամբ, նա արհամարհում է ծառացած վտանգը, քրքիջ տալիս ավերածությունների ու արյան մեջ, լուսանք ու մեղադրանքներ թափում իր իսկ կողմից չդաշտոնված ու մահաղուրծ եղբայրների վրա եւ անտեսում՝ այն ամենը, ինչ կասկածի է ենթարկում «Վերջին մարդու» իշխանությունը:

«Նա անփոխարինելի՞ է, նա միա՞կն է», ճչում է հոտը, եւ այդ ճիչը խլացնում է ինքնադաշտանության գիտակցությունը: Հոտի վերածված հասարակությունը որպես երկնային պարգեւ ստացել է այն առավելագույնը, ինչի մասին կարելի էր միայն երազել՝ ազատություն: Ազատություն՝ տվելու ամենացածրագույն բնազդներին եւ ինքնակառավարվելու նրանցով: Եւ որքան ավելի հիշ է «Վերջին մարդը» միջամտում հոտի կենսագործունեությանը, այնքան ավելի է նա գնահատվում եւ գիտակցվում իբրեւ անփոխարինելի: Բազմիցս պատմությամբ հաստատված ճշմարտություն է, որ հասարակությունը եւ մանավանդ հոտի ասիճանին իջած զանգվածը քշնամի է ցանկացած բարեփոխումների, ինքնակարգավորման, առավել եւս գործողությունների, որոնք պահանջելու են հաղթահարել սեփական ինքնությունը: Ուստի, միմյանցից անդունդով բաժանված «Վերջին մարդն» ու հոտը փոխադարձաբար գոհ են ու երջանիկ, քանզի յուրաքանչյուրն ստացել է այն, ինչին ձգտում էր՝ մեկը անսասան իշխանությունը, մյուսն իր ցածրագույն բնազդներով կառավարվելու բացարձակ ազատությունն: Այս համերաշխությունն անհաղթահարելի է, քանզի *«հողը փոխարինել է եւ նրա վրա թռչկոտում է «Վերջին մարդը», որը նվազեցնում եւ փոշիացնում է ամեն ինչ: Նրա սերունդն անշիջանելի է, ինչպես գետնային լուն. «Վերջին մարդը» բոլորից երկարակյաց է»:*

Ուզում ենք գիտակցել դա, թե ոչ, բայց մեր ժողովուրդը թեւակոխել է պատմական մի նոր փուլ, որի պարզամիտ ընկալումը տանում է պարզունակ աղեսի: *«Վերահարմարեցման եւ վարքի ստերեոտիպների փոփոխության բարդ ու դժվարին պայմաններում կրկին ի հայտ է գալիս բնական ընտրությունը, եւ նրա կողմից ձեւավորվող պատուլյացիան կամ կործանվում է, կամ դառնում նոր էթնոս» (Գումիլյով Լ. Ն.):* Հասկանո՞ւմ են արդյոք «Վերջին մարդը» եւ նրանից կառչած զանգվածը, որ հանգուցալուծման երրորդ ճանապարհ չկա: Գուցե եւ հասկանում են, բայց երկուստեք բավարարող գոյատեւման խրախճանքի մեջ, ինքնախաբեությամբ երկարաձգում են ժամանակը: Զանգվածն անշեղորեն հետեւվում է «Վերջին մարդուն» եւ ցնորային համառությամբ հավատում, որ բնական ընտրության այս դաժան պայմաններում գոյատեւելու է մի մարմին, որը զուրկ է ինքնավերարտադրության ընդունակությունից, ինքնաղաշտանության կամից եւ թշնամի է բարեփոխության շողին իսկ: *«Բնական ընտրությունն ազդում է այն փոփոխությունների վրա, որոնք ունեն հարմարողական բնույթ, իսկ այդ փոփոխությունները ցանկացած ուղղությամբ չէ, որ գնում են: Նրանց առավելագույն մասը տանում է կառուցվածքի բարդության կորստին, կամ մարմինների աղածման, այսինքն՝ անկման» (Ջոն Հոլդեն):*

Համեմատեք վերն ասվածը մեր հասարակությունում տեղի ունեցող տեղաշարժերի հետ եւ գուցե գիտակցեք, թե ո՞ւր է տանում մեզ «Վերջին մարդու» իշխանությունը: Եւ մի խաբվեք, առավել եւս, մի փորձեք խաբել ուրիշներին դիմակայության ընդունակ առանձին բեկորների առկայությամբ, որոնք անհույս պայքար են մղում վերահաս աղեսի դեմ:

Որդեսզի անցումային փուլում մեծ կամ փոքր, ուժեղ կամ թույլ էթնոսը գոյատեւի, նրա ներսում պետք է իշխի հակաէգոիզմի էթիկան, երբ հասարակական շահը գերադասվում է անձնական շահից: Նման վիճակին ամբոխավարությամբ կամ դասարկ կարգախոսներով հասնել հնարավոր չէ, առավել եւս դա բացառվում է հասարակության մեջ խստական վերաբերմունքի առկայությամբ: Հակաէգոիզմի էթիկան հասու է միայն այն հասարակություններին, որ առաջնորդից մինչեւ ստորին ասիճանի մարդը ունեն միավորիչ գաղափար, որ կա միավորիչ նպատակ, որ յուրաքանչյուրն իր տեղում համադասասխան իրավունք եւ պատասխանատվություն ունի, որ գոյատեւումը գնահատվում է ոչ թե իբրեւ նպատակ, այլ միջոց՝ ստեղծագործելու, նպատակներն իրականացնելու եւ զարգանալու:

Կարո՞ղ է, արդյոք, այս ամենն իրականացնել «Վերջին մարդը», որը ժողովրդի եւ երկրի վերածննդի մեծ ճանապարհի դեռ առաջին քայլը չարած՝ հռչակեց, թե «մենք արդեն երջանիկ ենք, քանզի գտել ենք ճշմարտությունը»:

Հակաէգոիզմի էթիկայով առաջնորդվող հասարակությունն առավելապես զգայուն է իր ամբողջականության յուրաքանչյուր մասնիկի հետ կատարվող երեւույթների նկատմամբ: Նա առողջ ցնցում է ապրում իր մասնիկի ապրած դրժբախտությունից, դրանում արարացիորեն տեսնելով ողջ ընդհանրության վրա ծառացած վտանգը: Այստեղ բարձրագույն արժեքը կյանքն է, եւ ընդհանրության համար թափված արյան յուրաքանչյուր կաթիլն իր գինն ու հաշիվն ունի: Արժեքավորված կյանքի բարձումում է, որ ձեւավորվում է ընդհանրության շահերի պաշտպանության գիտակցությունը եւ այն անհաղթահարելի է, քանզի հիմնված չէ պատվախնդրությունից դրդված ինքնազոհաբերության վրա եւ առանձին բեկորների հոգու պարտը չէ, այլ պարտականություն եւ նույնիսկ արտոնություն, դաստիարակված հակաէգոիզմի էթիկայի բարձրագույն չափանիշներով:

Նայեք պաշտպանության խնդրի նկատմամբ մեր զանգվածի ունեցած վերաբերմունքին եւ գուցե գիտակցեք, թե ցածրագության եւ ընկրկվածության ինչ աստիճանի է մեզ իջեցրել «Վերջին մարդու» իշխանությունը: «Մենք խաղաղության ենք ձգտում», ասում է «Վերջին մարդը»: «Մենք պատերազմ չենք ուզում», ճչում է զանգվածն ու հանգստանում, որ «Վերջին մարդը» թույլ չի տալու, որ պատերազմ լինի: Բայց նա արդեն սանձազերծել է պատերազմը եւ իր դեմի գահը տանող ճանապարհին այրել պատերազմից հետո տանող բոլոր կամուրջները: Եւ այժմ պատմության կամ տրամաբանության ո՞ր օրենքով է ապացուցվելու, թե պատերազմն անտեսելը հավասարազոր է նրա բացակայությանը:

Այդ ինչպե՞ս է, որ անընդհատ խաղաղություն ենք ցանում, իսկ արդյունքում՝ պատերազմ հնձում: Չե՞նք տեսնում, որ «Վերջին մարդու» «խաղաղության» քաղաքականությունը պատերազմի հիմքերն է ամրացնում: Տեսնում ենք, բայց քանի դեռ այս ամենակուլ մայրաքաղաք կոչվածը քշնամու ռումբերից ավերակների չի վերածվել, շարունակելու ենք ջայլամի նման գլուխները հողի մեջ թաղած չտեսնելու տալ պատերազմը: *«Հակաէգոիստները պաշտպանում են էթնոսն ամբողջությամբ, իսկ էգոիստները վերարտադրում են այն սերունդներում: Բայց բնական ընտրությունը կրճատում է հակաէգոիստների քանակը, որն անդադար է դարձնում էթնոսը եւ ժամանակ անց էթնոսը, զրկվելով իր պաշտպաններից, կոլ է գնում իր հարեւաններին» (Գումիլյով Լ. Ն.):* Մեր հասարակությունում, որ հակաէգոիզմը խիստ սահմանափակ արտահայտություն ունի, իսկ զանգվածները «Վերջին մարդու» իշխանության ջանքերով օրեցօր կաղապարվում են սեփական ես-ի մեջ, կորցնելով ընդհանրական շահերի առաջնայնության ըմբռնումը, այս գործընթացը առավել արագ է կատարվում: Համատարած ամենաթողությամբ ու անբարոյականությամբ, տնտեսական եւ սոցիալական վայրի իրականությամբ «Վերջին մարդը» ոչնչացնում է հակաէգոիզմի սաղմերն իսկ, եւ մտածո՞ւմ ենք, արդյոք, թե ո՞վ է պաշտպանելու մեր ընդհանրությունը, երբ ռազմաճակատներում այսպես շռայլորեն զոհաբերում ենք ժողովրդի ինքնապաշտպանության գեները կրող մի հատվածի վերջին բեկորները: Մի՛ խաբվեք, եւ մի՛ փորձեք խաբել ուրիշներին, թե արհավիրքը կողքով է անցնելու, չշոշափելով յուրաքանչյուրիդ ես-ը, քանզի պատմությունը նման հատարակությունների վերջաբանի բազում օրինակներ է տվել բնաջնջված Կարթագենից մինչեւ մասնատված Ռեչ Պոսպոլիտան: Այնտեղ եւս «Վերջին մարդու» իշխանությունն էր, որ սպանեց ժողովրդին ավելի վաղ, քան թշնամին:

Պարզունակ դարձած էթնիկական համակարգերը դատապարտված են: *«Համեմատական հավասարակշռության պայմաններում կառուցվածքների բարդացումը բարձրացնում է դիմադրողականությունը թշնամական շրջապատի նկատմամբ, իսկ պարզունակացումը թուլացնում է այն»:* Բարդացման համակարգի մեջ կարեւորվում են հասարակական հարաբերությունների բոլոր պտուտները, սկսած կենցաղային հնաոճ, քարացած եւ դրանով իսկ պարզեցված ավանդականության հաղթահարումից մինչեւ լիարժեքորեն գործող բազմակուսակցականությունն ու ազդեցիկ այլակարծությունը, տարածքների ֆեդերալիզացիայից մինչեւ ազգային գաղափարախոսության առկայությունն ու ազգային բանակը: Իսկ պարզունակացման բարձրագույն աստիճանը տվյալ համակարգում հակաէգոիզմի էթիկայի թուլությունն է կամ բացակայությունը, քանզի անխուսափելիորեն հանգեցնում է հավասարակշռության եւ պեսականության կորստին:

Պեսականության թուլությունը ողջ էթնոսի թուլությունն է, իսկ գաղթականության ուղին բռնած էթնոսները հազարամյակներ շարունակ հալածվել են եւ շարունակելու են հալածվել, որքան էլ քաղաքակիրթ չթվա աշխարհը: Մարդկությունը մի ինչ-որ գերագույն տրամաբանությամբ չի ներում այն ժողովուրդներին, որոնք չկարողացան պաշտպանել իրենց հայրենիքը եւ հալածում է նրանց մինչեւ այն աստիճանը, երբ նրանք կամ վերանում են, կամ կրկին քավում իրենց մեղքը՝ վերակերտելով հայրենիքը:

Հայերի հալածումը գուցե եւ նոր երեւույթ չէ, սակայն նորություն է նրանց ընկալվելը իբրեւ հայրենիք ունեցող, բայց նրանից հրաժարվող ժողովուրդ: Ցեղասպանությամբ ձեւավորված զոհի կերպարն իր տեղը զիջում է հայրենիքը վերակերտել չցանկացած անբարոյական ազգի կերպարին եւ լարվածության տարածքներում հակահայ գործողություններն ընդամենը սկիզբն են այն ցավագին ընթացքի, որն սպառնում է մեզ, եթե չկարողանանք համայն հայության հայրենիքը կառուցել: «Վերջին մարդու» իշխանությունը նման հույսերի տեղ չի թողնում:

Ազգային իդեալներից զրկված եւ սեփական ցածրագույն բնազդների հաղթանակից սարսափած էթնոսը ցրվում է, իսկ «Վերջին մարդու» դաստիարակած զանգվածը նպաստում է դրան, որպեսզի հեսագայում ինքն էլ մաս-մաս միանա գնացողներին: Հավասարակշռության գիտակցությունը հավասարվել է նվազագույնի, քանզի էթնոսի ներսում ուժով եւ կարողություններով միմյանց խեղդելը եւ սեփական ես-ի խնդիրների լուծումը ի հաշիվ ուրիշների օրինականացված բարոյականություն է դարձել: Մենք այլեւս ընդունակ չենք մտահոգվելու ուրիշների ճակատագրով, քանզի հաղթանակած էգոիզմի էթիկան մեզ պարտադրում է միայն ես-ի պաշտամունքը: Էթնիկական ընդհանրությունը քայքայվում է ինչպես ներքեւից վերեւ, այնպես էլ վերեւից ներքեւ:

Զանգվածի գիտակցությունից դուրս է մղվել հայ հավատական գիտակցությունը, տեղը լրացնելով ներքին տարանջատման պայմանանշաններով, որոնցից առավել էականը տարանջատումն է ըստ տարածքային պատկանելության: Հայ եւ Հայաստան ընդհանրական հասկացողություններին փոխարինել են Ղարաբաղ-ղարաբաղցի, Զանգեզուր-զանգեզուրցի, աղեսի գոտի-աղեսյալներ, պատերազմական տարածքներ-զաղթականներ հասկացողությունները, ընդհուպ մինչեւ առանձին բնակավայրերը, ինչպես՝ Արծվաշեն-արծվաշենցիներ: Պարզամիտ գիտնականները կարծում էին, որ էթնոսների ներսում տարածքային մասնատվածությունն անցյալի խնդիր է եւ նոր ժամանակներում դա հնարավոր չէ: Սակայն Հայաստանում «Վերջին մարդու» իշխանությունը հերքեց այդ թյուր կարծիքը եւ իջեցրեց երկիրը մինչեւ ավատական մասնատվածության իրողությունների, երբ յուրաքանչյուր ավատ իր հողատակներով պատասխանատու էր միայն իր տարածքի համար եւ պաշտպանում էր միայն իր տարածքը:

Ինքնախայտում աղրող էթնոսներն իրենց կործանման պատճառները սովորաբար հակված են փնտրել առանձին երկրների կամ ժողովուրդների, միջազգային մութ ուժերի խարդավանքների եւ այլ բաների մեջ, շարունակելով այն ինքնախաբեությունը, որին արդեն իսկ զոհ են գնացել: Կարծում ենք, որ ամեն ինչ շատ ավելի պարզ է եւ տրամաբանական: Բնական ընտրության օրենքները էթնոսֆերայում նույնքան պարբերաբար մաքրում են էթնոսֆերան թույլ, անընդունակ եւ պորտաբուծությանը հակված տարրերից՝ իբրեւ գործիք օգտագործելով արտաքին ագրեսիան, ներքին համաճեները եւ այլն: Եթե էթնոսն ինքը բերանում է կատարելագործվել, ստեղծել ինքնավերարտադրությանը նպաստող հասարակական հարաբերությունների եւ ներհասարակական կառույցների անհրաժեշտ համակարգերը, եթե խեղդում է ինքնապաշտպանության բնազդը եւ զլանում է պաշտպանել ինքն իրեն, ապա նա դատապարտված է:

Ցանկացած ժողովուրդ, որ խաղաղություն է մուրում՝ պատրաստ զոհաբերելու իր հայրենիքն ու իր անբաժանելի հատվածի կյանքը, դատապարտված է կործանման: Ի վերջո, ժողովուրդն է տնօրինում իր ճակատագիրը՝ չտրվելով «վերջին մարդու» կործանարար իշխանությանը կամ տրվելով նրա կողմից առաջադրված անհոգության գայթակղությանը: «Վերջին մարդու» իշխանությունից սարսափելը ողջ ժողովրդի խնդիրն է, քանզի «Վերջին մարդու» գործելակերպի բաղկացուցիչ մասն է կազմում *«ժամանակ առ ժամանակ թույն տալ՝ դա հաճելի երազներ է առաջացնում: Իսկ վերջում թույնի մեծ քաժին, որպեսզի մահը հաճելի լինի» (Նիցշե):* ■

digitised by A.R.A.R.@

# Մեր նպատակն է ստեղծել եզդի-ասորական միասնական պետություն

*համայն աշխարհի եզդիների հոգեւոր առաջնորդներից Միր Մաուին պատասխանում է «Ազգ»ի հարցերին*

**Հայաստանի եզդիների ազգային միության հրավերով Հայաստանում է գտնվում համայն աշխարհի եզդիների հոգեւոր գերագույն առաջնորդներից մեկը՝ Միր Մաուին, որդու՝ Միր Անվարի ուղեկցությամբ: Առայժմ Միրը շրջում է հանրապետության եզդիաբնակ շրջաններում, ծանոթանում համայնքին ու նրա խնդիրներին:**

**– Միր Մաուի, ո՞րն է Հայաստան կատարած ձեր այցելության նպատակը եւ ի՞նչ ծրագրեր ունեք առաջիկայում:**

– Այցելության նպատակն է ծանոթանալ Հայաստանի եզդիական համայնքի, նրա խնդիրների հետ: Նպատակ ունենք Հայաստանում ստեղծել առեւտրական կետ: Այդպիսի կետեր կստեղծվեն նաեւ աշխարհի բոլոր այն երկրներում, որտեղ եզդիական համայնքներ կան: Դրանք պետք է զբաղվեն ապրանքափոխանակությամբ եւ առեւտրով: Հույս ունենք, որ դա կնպաստի ոչ միայն հայաստանաբնակ եզդիների, այլեւ Հայաստանի ողջ բնակչության տնտեսական բարգավաճմանը: Եթե, տա աստված, վիճակը բարելավվի, եւ ճանապարհները բացվեն, ես Հայաստանի եզդիական համայնքին օգնելու մեծ ծրագրեր ունեմ:

Նպատակ ունենք նաեւ Հայաստանում ստեղծել մի կազմակերպություն, որը ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ աշխարհում պաշտոնապես կներկայացնի Հայաստանի եզդիներին:

Ինչ վերաբերում է ծրագրերին, ապա այստեղից մեկնելու եմ Ամերիկա, որտեղ մասնակցելու եմ ազգային փոքրամասնությունների միջազգային համաժողովին: Այնտեղ քննարկվելու են ազգային փոքրամասնությունների իրավունքներին եւ ազատություններին վերաբերող հարցեր, եւ մենք՝ եզդիներս, պատրաստ ենք ասելու, որպեսզի Իրաքի հյուսիսում, որտեղ մեր քնարանն ու մեր արքավայրերն են, ասեմ օրհնությամբ մի հողակտոր ձեռք բերենք եւ, որպես հալածված ժողովուրդ, մեր հոգի վրա ազատություն ստանանք եւ ստեղծենք մեր պետականությունը:

**– Ինչպիսի՞ն տեսաք Հայաստանի եզդիական համայնքը:**

– Նախ ասեմ, որ ի տարբերություն, ասենք, Թուրքիայի կամ Պակիստանի, որտեղ նույնպես բազմաթիվ եզդիներ են ապրում, եզդիների վիճակը բավական է Իրաքում, Գերմանիայում եւ Հայաստանում: Նրանք, ինչպես ասում են, դողում են իրենց նիստուկացի, կրոնի եւ սովորույթների համար:

Ես շատ ուրախացա, տեղեկանալով, որ Հայաստանում եզդիներին տրամադրվել են ռադիոհաղորդումներ եւ թերթ: Օգտվելով առիթից, ուզում եմ կոչ անել Հայաստանում ապրող եզդիներին, որպեսզի նրանք լինեն ուսումնասեր եւ կրթվեն, որովհետեւ միայն կրթությունը կարող է փրկել եզդի ժողովրդին:

Միաժամանակ ուզում եմ իմ շնորհակալությունը հայտնել Հայաստանի կառավարությանը՝ եզդիներին զանգվածային լրատվության միջոցներ տրամադրելու համար: Սա մեծ նվաճում է եզդի ժողովրդի համար, որովհետեւ աշխարհի ոչ մի ուրիշ երկրում եզդիներն այդ հնարավորությունը չունեն:

**– Որեւէ պաշտոնական հանդիպում ունեցե՞լ եք Հայաստանի իշխանությունների կամ եկեղեցու ներկայացուցիչների հետ:**

– Գիտե՞ք ինչ, եթե Հայաստանի ներկայացուցիչները եւ, մասնավորապես, եկեղեցու առաջնորդը գային Իրաք, ես իմ ամբողջ ժողովրդով ընդառաջ կգնայի նրան եւ հյուր կդառնի: Այսօր ես այցելության եմ եկել իմ հոտին եւ նրա հյուրն եմ: Եթե Հայաստանի աշխարհիկ եւ հոգեւոր առաջնորդները ցանկանում են հանդիպել ինձ հետ, խնդրեմ, նրանք կարող են ինձ արժանացնել իրենց այցելությանը:

**– Իսկ ձեր այցելության մասին նախօրոք տեղյակ պահե՞լ եք Հայաստանի իշխանություններին:**

– Ես Հայաստանի պաշտոնական բոլոր տոների առթիվ միշտ շնորհավորական նամակներ եմ հղում Հայաստանի իշխանություններին: Անցյալ տարի պաշտոնական հրավեր եմ ստացել՝ մասնակցելու Հայաստանի Անկախության հանդեսներին, բայց, ցավոք սրտի, չեմ կարողացել գալ Հայաստան: Կարծում եմ, որ Հայաստանի իշխանությունները տեղյակ էին իմ գալստյան մասին:

**– Ի՞նչ կարծիքի եք եզդի-քուրդ շարունակվող վիճաբանության մասին:**

– Այն եզդին, որն ուրանում է իր ազգը եւ կրոնը, իսկ վիճաբանությունը սրանց շուրջն է, ընդհանրապես դուրս է մնում մեր ազգից (ստրակիզմի է ենթարկվում կամ, այլ կերպ ասած, նրան դուրս են անում ազգից): Կրկնում եմ՝ խոսքը ոչ թե քրդերի մասին է, այլ այն եզդիների, որոնք իրենց քուրդ են անվանում:

Իրենց քուրդ անվանող եզդիներն իրենք հրաշալի գիտեն, որ եզդիներ են, պարզապես ինչ-ինչ քաղաքական նպատակներով իրենց քրդեր են անվանում: Այդպիսի մարդիկ հարգանքի արժանի չեն:

**– Ձեր տվյալներով, որքա՞ն եզդիներ են ապրում ամբողջ աշխարհում եւ հիմնականում ո՞ր երկրներում են կենտրոնացած:**

– Եզդիներն ապրում են Հրդեկաստանում, Աֆղանստանում, Պակիստանում, Իրանում, Իրաքում, Թուրքիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Հայաստանում եւ այլն: Բայց կան նաեւ շատ պետություններ, որտեղ թեեւ նույնպես ապրում են եզդիներ, բայց նրանց թվաքանակի մասին տեղեկություններ չունենք: Մենք նպատակ ունենք շրջել այդ բոլոր երկրները եւ ճշտել եզդիների թվաքանակը:

Մեր ունեցած վերջին տվյալների համաձայն, ամբողջ աշխարհում եզդիների թիվը հասնում է մոտ 7 միլիոնի:

ՄԱՍԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ, ՍՊՈՒՆԴԱՐՈՒ

**– Ի՞նչ կարծիքի եք այն մասին, որ Հայաստանի Հանրապետության նոր անձնագրերում ազգության մասին նշելը թողնվում է անձնագրի տիրոջ հայեցողությանը:**

– Գիտե՞ք, նման մի երեւույթ ժամանակին նկատվել է նաեւ Իրաքում, որտեղ պետության ղեկավարությունը հաճախ վարում էր երկդիմաբանության եւ հրահրման քաղաքականություն՝ դրդեւարելով մերթ ասորական, մերթ եզդիական, մերթ քրդական կողմնորոշում: Ու մտավախություն ունեմ, թե կարող է ստացվել այնպես, որ եզդի-քրդական հարցը շահարկվի, եւ Հայաստանում եզդիների վիճակը վատանա: Թող հայերը հանկարծ չմտածեն, թե եզդիները փոքր ու անպաշտպան ազգ են, իսկ վաղը կարող է քրդական հզոր պետություն ստեղծվել: Ես քրդերի դեմ ոչինչ չունեմ, պարզապես հանկարծ այնպես չստացվի, որ անտեսվեն ու ոտնահարվեն եզդիների շահերը:

**– Ո՞րն է եզդիների պայքարի հիմնական նպատակը:**

– Ես արդեն ասացի, որ մեր վերջնական նպատակն ազատությունն է, մենք նպատակ ունենք Իրաքի հյուսիսում, որտեղ մեր քնարանն է եւ մեր արքավայրը, ստեղծել եզդի-ասորական միասնական պետություն:

1962 թվականին Իրաքի հյուսիսում տեղի է ունեցել քրիստոնյաների մեծ ջարդ, որի մասին ժամանակին գրել են աշխարհի բազմաթիվ թերթեր: Քրիստոնյաները նույնիսկ դիմել են Հռոմի Պապին, բայց որեւէ օգնություն չեն ստացել: Ես 4 հազար եզդիների հետ միասին օգնության եմ գնացել քրիստոնյաներին (նրանք հիմնականում հայեր եւ ասորիներ էին) եւ ազատագրել 30-40 գյուղեր: Դրանցից մեկում նույնիսկ 4 քրիստոնեական եկեղեցիներ կային:

**– Ներկայումս Իրաքի հյուսիսում կա՞ն հայկական գյուղեր:**

– Ոչ, դրանք ավերվել են 1962-63 թվականներին: Այժմ մեր սրբավայրի մոտ, մեր գյուղերում ապրում են մոտ 80 ընտանիք հայեր, որոնք հրաշալի գիտեն մեր լեզուն եւ սովորույթները:

**– Միր Անվար, հարցս ձեզ եմ ուղղում: Դուք պարզապես ուղեկցո՞ւմ եք ձեր հորը, թե առանձին ծրագրեր ունեք:**

– Ես Գերմանիայում ստեղծված եզդիական կրոնական համաշխարհային կենտրոնի առաջնորդն եմ եւ նպատակ ունեմ այդ կենտրոնի միջոցով ամբողջ աշխարհին ներկայացնել եզդի ժողովրդին: Բացի այդ, հորս մահից հետո, ինչպես ընդունված է մեզ մոտ, ես եմ զբաղեցնելու նրա տեղը, ուստի նպատակ ունեմ ծանոթանալ աշխարհի բոլոր եզդիական համայնքներին: Իմ գլխավորած կենտրոնն ընդգրկում է Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրների եզդիական համայնքների ներկայացուցիչներին, եւ հույս ունեմ, որ առաջիկայում նրանց կմիանա նաեւ Հայաստանի եզդիական համայնքի ներկայացուցիչը:

Հարցազրույցը վարեց
ԱՐՄԵՆ ԲԱԴԱՍՍԱՐՅԱՆԸ

## Ռ. Միրզախանյանի այցը Մ. Նահանգներ եւ Կանադա

ՌԱԿ Բոստոնի գրասենյակից հաղորդում են, որ արդեն 5-րդ օրն է, որ ՀՌԱԿ Հանրապետական վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը գտնվում է Մ. Նահանգներում: Անցյալ շաբաթ օրը նա մասնակցել է ՌԱԿ Արեւելյան Ամերիկայի եւ Կանադայի շրջանային 72-րդ պատգամավորական ժողովին, Նյու Ջերսիի Թենֆլայ քաղաքում: Ժողովի ընթացքում նա ունեցել է երկու ելույթ Հայաստանի տնտեսական-քաղաքական կացության եւ ՀՌԱԿ-ի գործունեության եւ անելիքների մասին, որից հետո սպառիչ պատասխանել է ներկա պատգամավորների հարցերին:

Նույն օրը երեկոյան Ռ. Միրզախանյանը գլխավոր բանախոսն է եղել Ս. Թովմաս եկեղեցու սրահում կայացած պատգամավորական ժողովի եզրափակիչ հանդիսության, ավելի ընդարձակ ներկայացնելով Հայաստանում ռամկավարացման գործընթացը, ՌԱԿ-ի դերը այդ գործում, ընդհանրապես տնտեսաքաղաքական իրավիճակը եւ Արցախի հարցի վերջին զարգացումները:

Ուրբաթ, սեպտեմբերի 4-ին ՀՌԱԿ ատենապետն առանձին տեսակցություն է ունեցել ՀԲԸ Միության նախագահ տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնի հետ, միության Նյու Ջերսիի կենտրոնում, խոսակցության առանցք ունենալով ազգային մշակութային կյանքի զարգացման խնդիրները:

Ռ. Միրզախանյանը վաղը Նյու Յորքից կմեկնի Բոստոն: Նրա ամերիկյան շրջադայությը բացի վերոհիշյալ քաղաքներից ընդգրկելու է Ֆիլադելֆիան, Սան Ֆրանցիսկո, Լոս Անջելես եւ Դետրոյթ քաղաքները, որից հետո նա կմեկնի Կանադա՝ Մոնրեալ եւ Տորոնտո: ■

*Նամակ խմբագրությանը*

# «Ղարաբաղ»ը օտարածին անվանում է

Բանաստեղծ, թարգմանիչ Սերգեյ Ումառյանը «Ազգ» թերթի մի հրապարակման առիթով գրած «Նորից արիացիների մասին» հոդվածում *(«Ազգ», 2 սեպտեմբերի, 1992 թ.)*, որին խելամտորեն պատասխանել է Էմմա Բեգիջանյանը *(տե՛ս նույն տեղում)*, *Ղարաբաղ* տեղանվան ծագման մասին հայտնել է մի այնպիսի՝ միանգամայն սխալ ու մերժելի կարծիք, որ երբեք անտեսել չի կարելի:

Անտեղի վկայաբերելով ակադեմիկոս Գ. Ղափանցյանին՝ Ս. Ումառյանը ոմանց պես փորձում է ժխտել *Ղարաբաղ* տեղանվան օտար ծագումը եւ ցույց տալ, թե իբր դա վաղ ժամանակներից եկող բուն հայկական անվանում է եւ *«բնավ ադրբեջանական ծագում չունի»*:

Շատ զարմանալի է, որ բանը այդպես է ներկայացնում նաեւ հարգելի մի ընկեր (այստեղ են ասել՝ Պլատոնը բարեկամս է, բայց ճշմարտությունն ավելի եմ սիրում), որ արեւելագետ լինելով՝ չգիտի կամ չի ուզում գիտենալ, որ իրապես Ղարաբաղ տեղանունը թուրք-պարսկական բառ է՝ կազմված թուրք. դարա-կարա (սեւ), պարսկ. բաղ (այգի) բաղադրիչներից եւ Ռաֆֆու ճիշտ բնութագրմամբ, *«թուրաց լեզվով»* իրոք *«սեւ այգի է նշանակում» (Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 9, Երեւան, 1987, էջ 523)*:

Նմանապես զարմանալի է, որ նա չգիտի, թե *Ղարաբաղ* տեղանունը ճիշտ այդպես է մեկնաբանել նաեւ մեծանուն հայագետ-լեզվաբան Հր. Աճառյանը՝ *«Կյանքիս հուշերից»* գրքում բառացիորեն ասելով. *«Երբ բարձրանում ես* (Շուշի քաղաքի.– Ա.Մ.) *բարձունքի գլուխը, որ տեղական բարբառով «քեռ» կամ «քեռեր» է կոչվում, առաջդ բացվում է մի հոյակապ տեսարան: Աջդ, ձախդ եւ հետեւդ բարձր բլուրներ են, ծածկված կարճահասակ անտառներով, որոնք սեւ գույն ունեն* (ընդգծումն իմն է– Ա.Մ.) *եւ սրա համար էլ երկիրը կոչվել է Ղարաբաղ, այսինքն՝ «Սեւ այգի»* (Հր. Աճառյան, *Կյանքիս հուշերից*, Երեւան, 1967, էջ 254)*:*

*Ղարաբաղ* տեղանվան սույն մեկնությունը բացարձակապես ճիշտ է եւ ոչ մի կասկած չի հարուցում: Այդ մասին նշել են ինչպես ուրիշները (տե՛ս, օրինակ, Բ. Ուլուբաբյանի հոդվածը *«Հայկական սովետական հանրագիտարանում»*, *հատ. 7, Երեւան, 1981, էջ 26)*, այնպես էլ տողերիս հեղինակը իր *«Տեղանվանումների բարեփոխության մասին» («Խորհրդային Հայաստան», 14 փետրվարի 1989 թ., «Արցախ եւ Ղարաբաղ. ընդունելին եւ մերժելին», («Խորհրդային Ղարաբաղ», 22 հունիսի 1989 թ.), «Իսկությունը ծուռ հայելու մեջ», («Երեկոյան Երեւան», 22 նոյեմբերի 1991 թ.) հոդվածներում...*

...Մեր կյանքում ժողովրդի համար ներկայումս ստեղծված ահագնալից ու արյունալի շրջանում շատ սովորական է դարձել մի խիստ դատապարտելի երեւույթ. մարդիկ կան, որոնք հեշտորեն խաղ են խաղում գիտության հետ եւ նկատի չեն առնում, թե ով ի՞նչ է ասել, այս կամ այն իրողությունը ե՞րբ, ինչպե՞ս է մեկնաբանել, ու համառորեն իրենց ասածն են պրնդում, տվյալ դեպքում էլ, ասենք, կեղծ ու անհիմն սուտգաբանություններ կատարում: Դրա մի ակընհայտ ապացույցն էլ ահա *Ղարաբաղ* տեղանվան օտարածին ծագման մերժումն է, որը վկայում է, որ այդպես վարվողներն ուղղակի մոռանում են, որ *Ղարաբաղը* նախապես, հնուց ի վեր *Արցախ* (Արձախ) է կոչվել եւ, իբրեւ տեղանուն, դրա փոխարեն գործածություն է ստացել այն ժամանակ, երբ թուրք-պարսկական հոչվոր ցեղերը ներխուժել եւ փորձել են իրենց տիրապետությունը հաստատել այնտեղ...

Նրանք մոռանում են նաեւ, որ դրանով, միայն դրանով պետք է բացատրել, որ հայերեն գրավոր աղբյուրներում Ղարաբաղ տեղանունն առաջին անգամ նշմարվում է 14-րդ դարից հետո, որ տեղացի պատմիչ Հովհաննիսիկ Ծարեցին (16-րդ դ. վերջ–17-րդ դ. սկիզբ) *Ղարաբաղ* անվանումից զատ բարգմանաբար նաեւ *Սեւ այգի* անվանումն է գործածել, որ *Ղարաբաղ* տեղանունը հայոց կյանքի վրա թուրքերի բողած ազդեցության մի արտահայտություն է, որից եւ մեկընդմիշտ պետք է հրաժարվել:

Ավելացնենք, որ *Ղարաբաղ* տեղանվան հնչյունական կազմը եւս ցույց է տալիս, որ այն ոչ թե բուն հայերեն (Արցախի բարբառի օրենքներով «բաղ» բառ-բաղադրիչի բ սկզբնահնչյունը պետք է ո լինվեր), այլ իրոք թուրք-պարսկական բառ է: Դա շատ լավ են գիտակցում եւ նախապատվությունը *Արցախ* տեղանվանը տալիս արցախցիները, որոնք այսօր էլ անձնուրաց ու հերոսական կռիվ են մղում ադրբեջանական թուրք ոճրագործների դեմ եւ ջանում ամեն կերպ կործանումից փրկել իրենց հայրենիքը՝ անառիկ հռչակված Արցախը...

Մնում է, որ դա գիտակցեն նաեւ նրանք, ովքեր անհիմն կերպով *Ղարաբաղ*-ը հայկական տեղանուն են համարում եւ *Արցախ*-ի փոխարեն էլ այդ մերժելի օտարածին անվանումը գործածում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Բանասիրության դոկտոր

digitised by A.R.A.R.@

# Եւս մեկ օրակ Իրաքի պարանոցին

*Սադդամի տերությունը մասնատելու նոր գործոններ են երևան գալիս*

Ֆրանսիական RFI եւ արաբական ռադիոկայանները սեպտեմբերի 5-ի երեկոյան սքեր արձակեցին մի հաղորդագրություն, որը նոր երանգ է հաղորդում Իրաքի եւ նրա նախագահ Սադդամ Հուսեյնի շուրջ ծավալված իրադարձություններին: Իրաքի «Թուրքմենական հայրենապահական կուսակցության» գլխավոր քարտուղար Մուզաֆֆար Արսլանը Թուրքիա կատարած այցելության ժամանակ պահանջել է, որ Արեւմուտքի կողմից իրականացվող վերահսկողությունը Իրաքի հյուսիսում ընդգրկի մինչեւ 34-րդ հորիզոնականն ընկած տարածքը, ներառնելով թուրքմեններով բնակեցված տարածքները:

Եթե հաշվի առնենք, որ Իրաքի հարավում շիա ազգաբնակչության անվտանգության ապահովության համար արդեն իսկ սահմանափակված է Իրաքի ինքնիշխանությունը մինչեւ 32-րդ հորիզոնականը, ապա պարզ է դառնում, թե ինչ հեռանկարի առջեւ են կանգնում Իրաք պետությունն ու նրա արաբ ժողովուրդը: Թեեւ երկրի բնիկ ազգաբնակչությունը՝ արաբները, կազմում են բնակչության ընդհանուր թվի 75 տոկոսը (Բրունկի էթնոդեմոգրաֆիական տեղեկատուի տվյալներով, 1974 թ. նրանց հաշվեկշիռը կազմում էր 76,4 տոկոս, ուստի 1990 թ. համեմատ այն պակասել է 1,4 տոկոսով), սակայն ազգային փոքրամասնությունների տարածքային բնակեցումը բարեդպաս պայմաններ է ստեղծում նպատակային գործողությունների դեպքում Իրաքը վերածել նոր Լիբանանի կամ Հարավսլավիայի:

Արաբներն Իրաքում գերակշռող մեծամասնություն են կազմում բոլոր նահանգներում, բացառությամբ հյուսիսի հինգ նահանգների: Այսպես, Սուլեյմանիայում նրանք կազմում են բնակչության ընդամենը 3 տոկոսը, Էրբիլում՝ 15, իսկ Նայնավա, Դահուք եւ Թաամին նահանգներում նրանց թիվը չի անցնում մեկ քառորդից:

Մինչեւ վերջերս Իրաքի հիմնական խնդիրները կապված էին քրդերի հետ, որոնք 1990 թ. տվյալներով կազմում են բնակչության 17 տոկոսը, (1974 թ. 19-ի փոխարեն), որոնց դեմ իրաքյան բանակը պարբերական ռազմական գործողություններ է վարում կիրառելով զանգվածային բնաջնջման արգելված միջոցները: Ոչ վաղ անցյալում, առանձնապես Ծոցի պատերազմի ընքացքում եւ դրանից հետո սրությամբ դրվեց նաեւ իրանցիների խնդիրը, որոնք բնակվում են կենտրոնական եւ հարավային շրջաններում եւ հիմնականում քաղաքաբնակ են: Նրանք կազմում են շիա կրոնի սրբավայրերի՝ Քարբալա եւ Անսարավայրերի՝ Նաջավ քաղաքների բնակչության մեկ երրորդը եւ գերակշռող մեծամասնություն են Իրանին սահմանակից տարածքներում:



Հեստրիր է, որ արեւմուտքը երբեք չի նշում հարավի շիաների էթնիկական իրանցիներ լինելու փաստը, առաջնորդվելով «շիա բնակչության անվտանգությունն ապահովելու» ընդհանուր կարգախոսով, իսկ եթե հաշվի առնենք, որ ըստ 1990 թ. տվյալների, շիա իրաքցիները կազմում են ընդհանուր բնակչության 62 տոկոսը, ապա այս պատրվակով կարելի է հսկողություն սահմանել երկրի ողջ տարածքի վրա:

Ինչ վերաբերում է թուրքմեններին, նրանց ընդհանուր քանակը հասնում է մեկ միլիոնի, որ ընդգրկված են թուրքմեները, թուրքերը եւ չերքեզները (1974 թ. տվյալներով, նրանք կազմում էին 265 հազար): Նրանք բնակվում են արաբների եւ քրդերի միջեւ ընկած տարածքներում, Մոսուլից դեպի հարավ-արեւելք եւ հիմնականում կենտրոնացած են Թաամին նահանգում, որի կենտրոնն է Քիրքուկ քաղաքը 535 հազար բնակչությամբ (1990 թ.): Ժողովրդագրական այս խճանկարը լրացնելու համար ճշտենք նաեւ, որ «չերքեզներ» ընդհանուր հասկացողության մեջ ներառվում են նաեւ ադիգեյները, լեզգիները եւ այլն, այսինքն ժողովուրդներ, որոնք բնակվում են Հորդանանում, Սիրիայում, Թուրքիայում եւ Ռուսաստանում:

Եթե «թուրքմենական խնդիրն» Իրաքում լուրջ ընքացք ստանա, ապա քաղաքական իրավիճակը շրջանում անչափ բարդ բնույթ կկրի: Թուրքմենական խաղաքարտի խաղարկումը փաստորեն ուղիղ ճանապարհ է բացում Թուրքիայի համար Իրաքի հյուսիսում իր ինքնիշխանությունը տարածելու գործում: Թուրքիան բազմիցս իր շահագրգռվածությունն է հայտնել իրաքյան Քրդիստանի եւ թուրքմեններով բնակեցված, նավթով հարուստ տարածքները տնօրինելու հարցում, իսկ բոլորովին վերջերս արեւմտյան ռադիոկայանները հայտնեցին, որ Իրաքի հնարավոր մասնատման դեպքում, քրդական անկախ պետության առաջացումը բացառելու համար, հյուսիսային տարածքները կարող են դրվել Թուրքիայի գերիշխանության տակ:

Առայժմ դժվար է ասել, թե արդյոք Արեւմուտքն ընդառաջ կգնա՞ Իրաքի թուրքմենների դիմումին եւ կընդլայնի՞ հյուսիսի վերահսկողության գիծը մինչեւ 34-րդ հորիզոնականը: Դա, համենայն դեպս, դուր չի գա ոչ արաբներին, ոչ Իրանին, եւ չպետք է բավարարի նաեւ քրդերին: Թուրքմենաբնակ տարածքներում իր եղբայրների անվտանգության ակտիվ պաշտպանությունն ստանձնելու դեպքում Թուրքիան անց ու դարձ կանի Քրդիստանի տարածքով, ինչը քրդերի համար նույնքան վտանգավոր է, որքան Սադդամի հարձակումները:

Մենք չենք կարծում, թե Իրաքի գործնական մասնատումը կամ նրա տարածքների իրավական հանձնումը այլ երկրի մոտ ադագայում կիրականանա: Առավել հավանական է, որ ժամանակի ընքացքում Իրաքը վերածվի միջէթնիկական պատերազմների մի բարդ եւ խճճված հանգույցի, որի մեջ անմիջականորեն կամ ոչ ուղղակի ձեւով կներքաշվեն շրջանի բոլոր երկրները, ներառյալ Ռուսաստանը, իր պայթյունավտանգ Հյուսիսային Կովկասով հանդերձ:

Թերեւս Իրաքի ամբողջականությունն ու քաղաքական ապագան փրկելու եւս մեկ տարբերակ կա, եթե Հուսեյնը հեռանա իշխանությունից եւ Բաղդադում հաստատվի Արեւմուտքի համար ընդունելի որեւէ վարչակարգ: Նման հույսերը խիստ եթերային են, քանզի Սադդամի նման ղեկավարներն առաջնորդվում են «իշխանություն կամ մահ» կարգախոսով եւ հետո հայտնի չէ, թե որքանով է Արեւմուտքը շահագրգռված իրաքյան հանգույցին տրամաբանական լուծում տալու գործում: Վերջին իրադարձությունները վկայում են, որ իրաքյան կաբսայում ջերմաստիճանի հետեւողական բարձրացումը հետաքրքրում է ոչ միայն տակտիկական, այլեւ ստրատեգիական նշանակներ:

Հ. Տ.

# Մոսկվան հերքում է Իրանին ինքնաթիռներ վաճառելու փաստը

Վերջերս ֆրանսիական «Մոնդ» թերթը, հենվելով արեւմտյան հատուկ ծառայությունների տեղեկությունների վրա, տպագրել էր մի հոդված, որում ասվում էր, թե Ռուսաստանը բանակցություններ է վարում Իրանի հետ 110 մարտական ինքնաթիռներ մատակարարելու վերաբերյալ: Նրանց թվում են Սու, ՄիԳ, Իլ տեսակի նորագույն ինքնաթիռներ: Այս գործարքի արժեքը, պնդում է «Մոնդը», կհասնի 11 միլիարդ դոլարի:

Նման հաղորդումներ վերջին ժամանակներս մեկ անգամ չէ, որ եղել են: «Մոնդի» տեղեկատվությունը տարակուսանք առաջացրեց ռազմական արտաքին-տնտեսական միավորման «Օբորոնէքսպորտ»ի մասնագետների մոտ: Ահա թե ինչ ասաց այդ միավորման նախագահ, գեներալ-մայոր Սերգեյ Կարաոզլանովը: Ի դեպ, այս հայորդու հայրը, ինժեներատեխնիկական ծառայության գեներալ-լեյտենանտ Ալեքսանդր Կարաոզլանովը երկար տարիներ բարձրաստիճան պաշտոններ է վարել ԽՍՀՄ պաշտպանության նախարարությունում եւ նույնպես զբաղվում էր նորագույն զինատեսակների հարցերով:

*«Իրանի հետ մենք նման բանակցություններ չենք ունեցել, հայտարարեց կրտսեր Կարաոզլանովը. մենք նրան չենք առաջարկել այդ 110 ինքնաթիռները: Ավելին, մեր աշխատակիցներից եւ ոչ մեկը ոչ մի փաստաթուղթ Իրանին չի փոխանցել»:*

Գեներալը նկատեց, որ Ռուսաստանը Իրանի հետ համագործակցում է ռազմատեխնիկական առաքելություններ՝ նրա ռազմաօդային, ռազմածովային, ցամաքային զորքերին մատակարարելով տեխնիկա, սակայն դա կատարում է երկարաժամկետ հիմունքներով, համաձայն կառավարության համապատասխան որոշումների: Միաժամանակ գեներալ Կարաոզլանովը հրաժարվեց լրագրողներին տեղեկություններ տալ այն ռազմական մատակարարումների ծավալի եւ գների մասին, որոնք Ռուսաստանը իրոք վաճառում է Իրանին: Ըստ նրա, դա առեւտրական գաղտնիք է:



«Օբորոնէքսպորտ»ի աշխատակիցները հայտնեցին, որ Իրանի հետ ռազմական համագործակցությունը ներկայումս բավական բարդացել է: դրան խանգարում են վճարումների փոխադարձ պարտքերը: Ռուսաստանը իր հարավային դրացուն պարտք է մոտ 600 միլիոն դոլար, որոնցից 200 միլիոն՝ ժողտպառման ապրանքների համար, 150 միլիոն՝ գազի համար, որը Իրանը առաքում է Ադրբեջանին: Մոտավորապես այդքան գումար Իրանը պարտք է Ռուսաստանին տարբեր տեսակի, ինչպես միավորումում ասում են, «հատուկ գույքի» համար, որը արտադրվել է մինչեւ 1991 թվականի հունվարի մեկը:

Իրավիճակը բարդացնում է նաեւ այն հանգամանքը, որ Իրանից բնական գազը անցնում է ոչ թե Ռուսաստան, այլ Ադրբեջան: Խորհրդային այդ նախկին հանրապետությունը, իսկ այժմ անկախ պետությունը, որն, ի դեպ, չի մտել ԱՊՀ-ի կազմի մեջ, իր վրա չի վերցրել ռուսաստանյան պարտքի այդ մասը: Ավելին, գազի նոր բանակցությունները Պարսից ծոցի պետությունների հետ, թույլ չտալ մուտք գործել նշված շրջանի սպառազինման շուկան կամ դուրս մղել այնտեղից:

*«Սակայն մենք,* պնդում է գեներալ Կարաոզլանովը, *սպառազինման շուկաներում խստորեն գործում ենք այն կանոնների շրջանակներում, որոնք հաստատված են ՄԱԿ-ի կողմից, եւ ձգտում ենք չխախտել ուժերի հավասարակշռությունը, վնաս չհասցնել երրորդ երկրների անվտանգությանը: Ի դեպ, Իրանը չի մտնում պետությունների այն ցուցակի մեջ, որոնց միջազգային համակցության կողմից արգելված է զենք մատակարարել, եւ մենք իրավունք չունենք նրա հետ առեւտուր անել ապրանքների լայն տեսակներով»:*

■

## Նախագահների հրաժարականը արյունահեղության պատճառ

BBC ռադիոկայանի մոսկովյան թղթակիցը անդրադառնալով Ռահմոն Նաբիեւի հրաժարականին, նշում է, թե ԽՍՀՄ փլուզումից հետո առաջացած անկախ պետությունների երրորդ օրինական նախագահն է, որ զրկվում է իշխանությունից բռնի ճանապարհով: Նա օրինաչափ է համարում նման ընքացքն այն երկրներում, որ իշխանությունները չեն կարողանում լուծում գտնել իրենց ժողովուրդների առջեւ ծառացած հիմնահարցերին, միաժամանակ, դա խիստ վտանգավոր է դիտվում, քանզի նախագահների զահընկեցության ընքացքը զուգորդվում է լայնածավալ արյունահեղությամբ եւ երկարատեւ քաոսով:

## Ղազախստանը անվտանգության խոստումներ է տալիս Իսրայելին

Ֆրանսիական RFI ռադիոկայանը հաղորդել է, որ Ղազախստանի վարչապետ Տերեշչենկոն պատրաստական այցով գտնվում է Իսրայելում, որ հանդիպել է Իսրայելի նախագահ Հաիմ Հերցոգի հետ եւ վստահեցրել, որ Ղազախստանը ձեռնպահ կմնա իր միջուկային հումքն ու տեխնոլոգիաները Միջին Արեւելքի որեւէ երկիր արտահանելուց, ուստի Իսրայելի ժողովուրդը եւ իշխանությունները կարող են հանգիստ լինել իրենց անվտանգության համար: Իսրայելը եւ Ղազախստանը համատեղ հանձնաժողով են ստեղծել երկու երկրների համագործակցությունը զարգացնելու համար:

## Մասսթրիխտը նո՞ր URSS

Ֆրանսիական «Քոտիդիեն դը Պարի» թերթը Մասսթրիխտի համաձայնությունները համեմատել է նոր URSS-ի ձեւավորման հետ, որի հաղավումը, սակայն, նշանակում է Ինքնիշխանությունից Զուրկ Հանրապետությունների Միություն: RFI ռադիոկայանը հաղորդում է, որ չնայած մեծ ընդդիմությանը, հարցումների արդյունքներով Ֆրանսիայի բնակչության 52 տոկոսը պատրաստ է քվեարկել Մասսթրիխտի համաձայնությունների օգտին:

## Ուզբեկ գեներալը պետք է հեռանա

Աֆղանստանի «Հիզբ ալ-Իսլամի» («Իսլամական ջիհադ») կուսակցության ղեկավար Գյուլբեդդին Հեքմաթյարը երկրի իշխանություններին մեղադրել է զինադադարի միտումնավոր խախտման մեջ: Նա եւս մեկ անգամ հաստատել է, որ քաղաքական համերաշխությունը երկրում կարող է ձեռք բերվել միայն այն բանից հետո, երբ նախկին համայնավարական իշխանությանը ծառայած գեներալ Դոստոմի ուզբեկական ջոկատները կհեռացվեն Քաբուլից, իսկ Դոստոմը՝ իշխանությունից:

## Դադարել է մարդասիրական օգնությունը Բոսնիային

Եվրոպական համագործակցությունը դադարեցրել է օդային ճանապարհով Բոսնիայի մայրաքաղաք Սարաեւո մարդասիրական օգնության առաքումը, իտալական օդանավի ողբերգական աղետի պատճառով: Արեւմտյան փորձագետները գտնում են, որ օդանավի հրետակոծումը կարող էր իրականացվել հակամարտ ուժերից յուրաքանչյուրի կողմից, սակայն միայն հրթիռների բեկորների ուսումնասիրությունը հնարավորություն կտա պարզելու, թե ո՞վ է խրետակոծել ինքնաթիռը:

digitised by A.R.A.R.@

## Իրանը զարգացնում է Տիգրիս-Եփրատ հովիտը

Սադդամ Հուսեյնը հրահանգեց ֆինանսավորել Տիգրիս եւ Եփրատ գետերի միջեւ գտնվող ավազուտները ջրարբիացնելու, ճանապարհներ կառուցելու եւ ընդհանրապես զարգացնելու ծրագիրը: Այդ ծրագրով նախատեսվում է նաեւ երկու գետերին զուգահեռ ոռոգման նոր ջրանցքներ բացել դեպի հարավ, դրանց հետ կապված էինարարական բոլոր աշխատանքներով: Արեւմտյան դիտորդների կարծիքով, այդ քայլի նպատակն է շինարարական աշխատանքների պատրվակի տակ փչացնել Հարավային Իրաքում շիա կրոնական մշակութային արժեքները:

Այս կողմից, ՄԱԿ-ի միջուկային զենքի սուգման մասնագիտական խմբի պետ Մորիզիո Զիֆերերոն հայտարարեց, թե Իրաքի միջուկային կարողությունն այժմ «զրո կետի վրա» է գտնվում: Ընորհիվ Ծոցի պատերազմի ընթացքում դաշնակիցների օդային արշավների, որոնք վնասազերծել են այն:

## Չեռնոբիլի հետեւանքներից՝ մանկական քաղցկեղ

Արեւմտյան առողջապահական բնագավառի հետազոտողները հայտնաբերել են, որ վերջին շրջանում զգալիորեն ավելացել են երեխաների շրջանում հազվադեպ քաղցկեղի դեպքերը աղեխի գոտում:

## Գերմանական գերեզմանները՝ թալանված

Մեսաղների վաճառքը Լատվիայում օրեցօր սպառնալի չափերի է հասնում: Ռիգայի գերեզմանատանը գերմանացի զինուորների 25 շիրիմներից պոկվել են խաչերի վրայի թիթեղյա հուշատախտակները: «Սա հակասում է բարոյական բոլոր նորմերին», հայտարարեց գերմանացի դեսպան կոմս Լամբսդորֆը: Դիվանագետն առեղծվածային է համարում, որ գունավոր մետաղները լատվիական արտահանության մեկ քառորդն են կազմում:

## Մայր Թերեզան Էստոնիային վերադարձնում է ասկետիզմին

Էստոնիայի կառավարությունը Բրիգիտայի օրդենի մայրապետ, Հռոմում ապրող մայր Թերեզա Ֆամիլիելիից նամակ է ստացել, որտեղ մայր Թերեզան խնդրել է կազմակերպությանը վերադարձնել իրենց նախկին ունեցվածքը, այդ թվում՝ Սոիրիտի կուսանոցը: Օրդենը պատրաստվում է վերադառնալ Տալլին, որպեսզի այստեղ նորից վերականգնի ասկետիզմն ու հոգեւորությունը:

## Տալլինում բացվում է մոգերի դպրոց

Տալլինում մոգերի դպրոց է բացվում: Մարդկանց եւ կենդանիներին բուժող հեքիմները կսովորեն բնության եւ միջատների վրա ազդել, կսովորեն քայլել կոտրած աղակու եւ տաք ածուխների վրայով: Ինչպես հայտարարեց դպրոցի հիմնադիր Ալբերտ դե Ստեփանյանը, շրջանավարտները կկարողանան անձրեւ բերել, գրել ամպերը, հմայել կովին, որպեսզի նա շատ կաթ տա, դուրս քաշել խոհանոցից խավարասերներին:

Առաջին կուրսում կդասավանդվի չինական, տիբեթյան եւ դասական հիպնոսի տեխնիկա: Ասակերտները կիմանան սիրային, գյուղական եւ գործնական սպիտակ մոգության 100 գաղտնիքները: Երկրորդ կուրսի ասակերտները կսովորեն սպիրիտիզմ, տարեային ոգիների հետ աշխատել, կենսաթերապիա: Դպրոցն ավարտողները կստանան միջազգային տիպի վկայական եւ մոգության օծում:

# Ազգային կերպարվեստի ապագայի մտահոգությամբ

Վերջին տասնամյակներին հայ մտավորականության մշտական տրտունջներից մեկն այն է եղել, թե հնարավոր չէ լիարժեք վերականգնել հայոց բազմադարյա մշակութային ավանդները, ազատորեն ազգային արվեստ զարգացնել: Արդեն մի քանի տարի է, ինչ փոխվել է դրությունը, գաղափարախոսական նախկին սահմանափակումներն ու կաղապարները չկան: Դրանց փոխարեն երեւան են եկել կաշկանդող նոր գործոններ՝ նյութական սղությունը եւ համընդհանուր տագնապը. մեր հայրենի հողի վրա ոչ մի օր «չեն լռել քնդանոթները»: Սակայն մշակույթի «զինվորները» նահանջելու իրավունք ունե՞ն: Կարծում եմ, որ որքան էլ դժվարին լինեն կյանքի ներկա պայմանները, դրանք չպետք է խոչընդոտեն ու արգելակեն մեր ազգային մշակույթի վերազարթոնքի բնականոն ընթացքը:

Կերպարվեստի ասպարեզում ընդհանուր պատկերը հակասական է. մի կողմից թուլանում են հին կառույցները (մշակույթի նախարարության համակարգ, նկարիչների միություն եւ այլն), տակավին դեռ են դառնում գեղարվեստական բարձր մակարդակ ունեցող ցուցահանդեսները եւ արվեստագիտական հրապարակումները, մյուս կողմից՝ ստեղծվում են ստեղծագործական նոր միություններ, բացվում տասնյակ ցուցահանդեսներ (սովորաբար՝ ցուցահանդես-վաճառք), սովորական են դառնում աճուրդներն ու Սարյանի արձանի շուրջ «տնավաճառները»: Այսինքն, պետական հովանավորությանն ասիճանաբար փոխարինելու է գալիս գեղարվեստական շուկան:

Եթե խորհրդային հասարակարգի կառուցվածքների ու միությունների թուլացումը բնական է, անընդունելի է այդ պատմաշրջանի արվեստի եւ հայ նկարիչների ավագ ու միջին սերնդի ներկայացուցիչների նկատմամբ նկատվող որոշ անտարբերությունը (որի վկայությունը նրանց ցուցահանդեսներն են, բայց դրանցից մեկը թերեւս այն է, որ թանգարանների շուրջն արհեստականորեն ստեղծվել է անվստահության մթնոլորտ: Մասնավորապես կերպարվեստի մայր թանգարանը՝ Ազգային պատկերասրահը, վերջին տարիներին մամուլի համար դարձել է վարկաբեկիչ հարձակումների թիրախ: Ցավոք, այդ անխոհեմ գործը ոմանք շարունակում են մինչեւ այժմ:

Հանրապետության գեղարվեստական կյանքն օրեցօր փոխվում է: Արդեն եզակի չեն ցուցահանդեսները արտասահմանում, կամ Հայաստանում առեւտուր անող արտասահմանցի հավաքորդները: Այս պայմաններում առաջանում է մի նոր խնդիր. ի՞նչ նկարել եւ ինչպե՞ս: Չեւ ու բովանդակություն թելադրողն այստեղ պահանջարկն է՝ շուկան: Վերջինս այսօր հիմնականում դնում է երկու պահանջ, օտարներին գոհացնելու համար՝ իրենց մշակույթին եւ անձնական ճաշակին համահունչ, իսկ սփյուռքահայերի համար՝ ազգային հուզական զգացումներ արթնացնող ստեղծագործություններ:

Ստացվում է մի վիճակ, երբ կառավարությունն ի վիճակի չէ պետական պատշաճ հովանավորությամբ սատար կանգնել կերպարվեստին, հայաստանցի բանիմաց արվեստասերները նյութապես անկարող են գնորդի դերում հանդես գալու, իսկ առկա շուկան ազգային մշակույթի առաջընթացի տեսակետից աննպաստ պայմաններ է թելադրում:

Նման իրավիճակից ելք գտնելու համար անհրաժեշտ է միավորել բոլոր հնարավոր միջոցներն ու ուժերը: Խոսքը նախ եւ առաջ վերաբերում է նորակազմ մշակութային, ստեղծագործական միություններին ու կազմակերպություններին, հիմնադրամներին ու խմբակցություններին, որոնք վերջին շրջանում որոշակի գործունեություն են ծավալել: Նրանց գործը պետք է լինի ոչ թե սոսկ շահույթի ետեւից ընկնելը, այլեւ շնորհալի, ընդգծված ազգային մտածողության տեր արվեստագետներին աջակցելն ու խրախուսելը: Այս ուղղությամբ մեծ անելիք ունեն նաեւ պետական կառույցները, կերպարվեստի ուսումնական հաստատությունները, ինչպես նաեւ տնտեսական զորացող գործարար շրջանների ներկայացուցիչները:

Ազգային եւ քրիստոնեական արվեստը հովանավորելու, պատվիրատուի իր վաղեմի ավանդները պետք է վերականգնի Հայաստանյայց Առաքելական եկեղեցին:

Հայ կերպարվեստի ապագան մեծապես պետք է հուզի նաեւ ավագ ու միջին սերնդի ներկայացուցիչներին, որոնցից ոմանք ոչ միայն փորձ, այլեւ որոշակի հնարավորություններ ունեն եւ ցանկության դեպքում կարող են սեփական արվեստանոց-ստուդիա ունենալ, երիտասարդներին ուսուցանել: Վերջապես, իրենց խոսքը պետք է ասեն նաեւ արվեստաբանները, հանդես գան քննադատական վերլուծական նյութերով: Արդեն սովորական դարձած անգործունյա վիճակը պետք է ժամանակին հաղթահարվի, այլապես մոտ ապագայում անհնար կլինի հայ կերպարվեստը դուրս բերել տիրող անորոշությունից: Չի կարելի հանդուրժել, որ տնտեսակարգի բնական փոփոխությունը այնպիսի ներգործություն ունենա ազգային արվեստի զարգացման վրա, որ կասեցնի նրա ավանդական հաջորդականությունն ու առաջընթացը: Այդ, կամովին չթողնենք այն դիրքերը, որոնք մեր նախնիները սրբությամբ են պահպանել ոչ պակաս դժվարին ժամանակներում:

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՄԱՐՋԱԿԱՆ ՄԱՐՋԱԿԱՆ ՄԱՐՋԱԿԱՆ ՄԱՐՋԱԿԱՆ ՄԱՐՋԱԿԱՆ ՄԱՐՋԱԿԱՆ ՄԱՐՋԱԿԱՆ ՄԱՐՋԱԿԱՆ

## Ֆիշեր-Սպասկի. Այսօր նախատեսվում է 5-րդ պարտիան

Մրցամարտի արձագանքը գնալով ավելի է մեծանում: Եւ դա, բնականաբար, առավելապես Ֆիշերի անհաշտ բնավորության շնորհիվ: Նա պահանջել էր, որ լրագրողները գրեն, թե այս մրցամարտն աշխարհի առաջնության 20-րդ դարի ռեւանշ մրցամարտն է: Երեւում է, ամերիկացի գրասայլակը բավարարված չէ լրագրողների դիրքորոշմամբ: Համենայն դեպս, նա պահանջել է, որ 5-րդ պարտիան ընթանա առանց լրագրողների ներկայության: Նրանց կարգելվի դահլիճ մտնել:

*Սպասկի-Ֆիշեր. 2-րդ պարտիա*
*Հին հնդկական պաշտպանություն*

1. d4 Ձf6 2. c4 g6 3. Ձc3 փg7 4. e4 d6 5. f3 c5 6. dc dc 7. թd8+ Ա:d8 8. փe3 Ձfd7 9. Ձge2 b6 10. 0-0-0 Ձa6 11. g3 Ձc7 12.f4 e6 13. փh3 Աe7 14. Նf1 h6 15. e5 փb7 16. g4 Նad8 17. Ձg3 f6 18. Ձce4 fe 19. f5 փ:e4 20. Ձ:e4 gf 21. gf Ձf6 22. Նg1 Ն:d1+ 23. Ա:d1 փf8 24. Ձ:f6 Ա:f6 25. Նf1 ef 26. Ն:f5+ Աg7 27. Ն:e5 փd6 28. Նe4 փ:h2 29. Աe2 h5 30. Նe7+ Աf6 31. Նd7 փe5 32. b3 h4 33. Աf3 Նg8 34. փg4 h3 35. Նh7 h2 36. փf4 Նf8 37. փ:e5+ Աg6+ 38. Աe4 Ա:h7 39. փ:h2 Նe8+ 40. Աf5 Ձe6 41. Աf6 Ձd4 42. փd6 Նe4 43. փd7 Նe2 44. a4 Նb2 45. փb8 a5 46. փa7 Ն:b3 47. Աe5 Ձf3+ 48. Աd6 Ձd2 49. փe6 Նb4 50. Աc6 Ձb3 51. փd5 Ն:a4 52. փ:b6 Նa1 53. փ:c5 a4 54. փb4 a3 55. c5 Ձd4+ 56. Աd7 Նd1 57. փ:a3 Ձc2 58. c6 Ն:d5+ 59. փd6, ոչ ոքի:



Երկրորդ պարտիայում Բորիս Սպասկին արդեն սկզբնախաղում գնաց բազուհիների փոխանակման, ըստ երեւույթին որոշելով սպիտակներով խաղալ «ոչ ոքին գրպանում» սկզբունքով: Մի պահ թվում էր, թե փարիզցի գրասայլակը իսկապես սպիտակ է սեւերին մատնել միայն հավասարության մասին: Սակայն հետագա բարդություններում Ֆիշերը, օգտագործելով մրցակցի անճշտությունը, հասավ նախ զինվորի, ապա որակի առավելության: Սպասսկուն հարկ եղավ տակտիկական հնարքներ գտնել՝ հավասարակշռությունը պահպանելու համար: Եզրափակիչ դիրքում սպիտակների անցողիկ զինվորը լիովին չեզոքացնում է ամերիկացու նավակի առավելությունը: Ահա թե ինչու Ֆիշերն առաջարկեց ոչ ոքի, որն անմիջապես ընդունեց Սպասկին: ■

## Անդրե Աղասին հաղթահարում է արգելքները

Մեծ թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնությունը թեւակոխում է վճռական փուլ:

Տղամարդկանց մրցաշարում ուժեղագույնները շարունակում են իրենց ելույթները: Հերթական արգելքները հաջողությամբ հաղթահարել են Ջիմ Կուրյեն, Ստեֆան Էդբերգը, Պիտ Սամպրասը, Անդրե Աղասին, Ալեքսանդր Վոլկովը, որը հերթական փուլում առավելության հասավ աշխարհի թիվ 5 ռակետի՝ հարավսլավացի Գորան Իվանիշեւիչի նկատմամբ, եւ ուրիշներ:

Կանանց առաջնությունում էլ ասպարեզում հանդիպաց անուններ են՝ Շտեֆի Գրաֆը, Մոնիկա Սելեշը, Գաբրիելա Սաբատինին: ■

## «Ուրարտու»-«Սպարտակ». Մուտքն ազատ է

Այսօր Երեւանի «Դինամո» մարզադահլիճում բասկետբոլի եւրոպական պաշտոնական մրցաշարերից մեկի՝ Կոռաչի գավաթի խաղարկության առաջին փուլում Երեւանի «Ուրարտու» տղամարդկանց թիմը հյուրընկալում է Բուլղարիայի Պլովդեն քաղաքի «Սպարտակ» թիմին: «Հայծխախոտ» արտադրական միավորման «Ուրարտու» մարզաառեւտրական ակումբը, հաշվի առնելով տնտեսական ընդհանուր ծանր վիճակը, իսկական մարզասերներին առանց բացառության հաճույքից չզրկելու համար գնել է հանդիպման բոլոր տոմսերը եւ մուտքը ազատ է լինելու: ■

## Հայաստանի առաջնությունը աշխարհի առաջնության ընտրական փուլ

Մեկնարկեց շախմատի տղամարդկանց ՀՀ բարձրագույն խմբի առաջնությունը, որտեղ առաջին անգամ կորոշվեն նաեւ աշխարհի հերթական առաջնության փնջային մրցաշարի մասնակիցները: Մեր հանրապետության ներկայացուցիչների վերջնական թիվը կհայտարարվի ավելի ուշ, ՖԻԴԵ-ի համաձայնությունից հետո: Հայտնի է, որ աշխարհի առաջնության հաջորդ շրջափուլի փնջային մրցաշարին մասնակցելու իրավունք ունեն մեր անվանի գրասայլակները՝ Ռաֆայել Վահանյանը, Վլադիմիր Հակոբյանը եւ Սմբատ Լպուտյանը: Նրանք բացակայում են Հայաստանի առաջնությունից: Այնուամենայնիվ, մրցաշարը բավականին ուժեղ կազմ ունի:

Ահա թե ովքեր են Հայաստանի առաջնության մասնակիցները՝

1. գր. Ա. Մինասյան (Երեւան)
2. վ/թ Ա. Բալայան (Վանաձոր)
3. վ/թ Ա. Սեամբուլյան (Երեւան)
4. ս/վ Հ. Դանիելյան (Երեւան)
5. ս/վ Ա. Համբարձումյան (Երեւան)
6. վ/թ Ա. Եղիազարյան (Երեւան)
7. ս/վ Ա. Անաստասյան (Երեւան)
8. վ/թ Ն. Քալանթարյան (Երեւան)
9. վ/թ Տ. Նալբանդյան (Երեւան)
10. գր. Ա. Պետրոսյան (Երեւան)
11. մ/վ Է. Մնացականյան (Երեւան)
12. ս/վ Մ. Խաչիյան (Մեղրի)

Առաջին տուր

Մինասյան-Խաչիյան՝ 1:0
Բալայան-Մնացականյան՝ 0:1
Սեամբուլյան-Պետրոսյան՝ 0.5:0.5
Դանիելյան-Նալբանդյան՝ 0:1
Համբարձումյան-Քալանթարյան՝ 0.5:0.5

Բաժինը վարում է ՍՈՒՐԵՆ ԲԱՂՐԱՏՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

# Հայաստանի սահմաններում կրակը չի դադարում

Հայաստանի սահմանամերձ շրջաններում իրավիճակի կայունացման միտում չի նկատվում: Շարունակվում են սահմանամերձ բնակավայրերի եւ հայկական սահմանադրի ուժերի զինուորական դիրքերի գնդակոծությունները:

***Կաղան.*** Սեպտեմբերի լույս 8-ի գիշերը Ադրբեջանի Զանգելանի շրջանի տարածքից ականանետերից, տանկերից, հրանոթներից եւ հետեւակի մարտական մեքենաներից հրետակոծվել եւ գնդակոծվել է շրջանի սահմանամերձ Սյունիք գյուղը: Երեկ օրվա ընթացքում գնդակոծվել են նաեւ սահմանամերձ մի շարք այլ գյուղեր: Հայկական կողմից մեկ մարդ վիրավորվել է: Հայկական ինքնաաշտպանական ուժերն ստիպված են եղել զրաստխան կրակ բացել:

Այս մասին Ադրբեջանի զինուորական նախարարությունը հայտնում է, թե Կաղանի շրջանի տարածքից զանգվածային հրետակոծության եւ գնդակոծության են ենթարկվել Զանգելանի շրջանի Սեղլար, Աղրենդ եւ Ղազանչի գյուղերը, որի հետեւանքով կան վիրավորներ եւ ավերածություններ: Զանգելանի շրջանում իբր մի քանի հեկտար ցորենի արտ է վառվել:

***Արարատ.*** Սեպտեմբերի լույս 8-ի գիշերը Նախիջեւանի Սադարակի շրջանի տարածքից ականանետերից եւ տանկերից գնդակոծվել են Երասխի զինուորական դիրքերը: Հայկական ինքնաաշտպանական ուժերի մարտիկներից մեկը վիրավորվել է:

Մինչդեռ, համաձայն նույն միջադեպի ադրբեջանական տարբերակի, տարբեր տեսակի զենքերից գնդակոծվել են Սադարակ շրջկենտրոնը եւ Բասարաս գյուղը:

***Կրասնոսելսկ.*** Երեկ եւ նախորդ գիշեր Ադրբեջանի Գեսարբեկի շրջանի տարածքից գնդակոծվել են շրջանի Վահան գյուղի զինուորական դիրքերը: Մինչդեռ, ինչպես հայտնում են Ադրբեջանի զինուորական նախարարությունից, անցած գիշեր հայկական կազմավորումներն իբր ներխուժել են Գեսարբեկի շրջանի տարածք, հարձակվել Նովոիվանովկա գյուղի ֆերմայի վրա եւ տղաներ այդ գյուղի երկու բնակիչների: Պատասխան գործողությունների շնորհիվ հայկական կազմավորումներն իբր նահանջել են՝ թողնելով մեկ տղաներ:

***Սիսիան.*** Օգոստոսի լույս 8-ի գիշերը փոքր տրամաչափի զենքերից գնդակոծվել են շրջանի սահմանամերձ Շաղաթ գյուղի զինուորական դիրքերը: Տուժածներ չկան: Երեկ օրվա երկրորդ կեսին զինուորական նախարարությունից հայտնեցին, որ ժամը 15-ին մոտ տանկերից եւ զրահամեքենաներից վերակսվել է շրջանի Շաղաթ եւ Բոնակոթ գյուղերի գնդակոծությունը: Տուժածների մասին տեղեկություններ չկան: ■

# 5 հայ զինվորներ դատաստանի տակ

Հոկտեմբերի 28-ին Ռոստովում կսկսվի 1991 թ. ապրիլին Հյուսիսային Կովկասի եւ Անդրկովկասի ներքին զորքերի վարչության զինուորական դատի տեղակալ Վլադիմիր Բլախոտինի սպանության գործով մեղադրվողների դատավարությունը: Մեղադրվում են 5 հայեր, որոնք Ռոստով էին ժամանել Ստեփանակերտի նախկին զորքերի գեներալ-մայոր Ալեքսանդր Սաֆրոնովի նկատմամբ «մահվան դատավճիռն» ի կատար ածելու նպատակով: Սաֆրոնովի փոխարեն նրանք սխալմամբ սպանել են Բլախոտինին: Ինչպես հաղորդել են «PF»-ին Ռուսաստանի անվտանգության նախարարության Ռոստովի մարզի հասարակական կապերի կենտրոնում, դատավարությունը լինելու է դռնփակ, մամուլի ներկայացուցիչներին չի թույլատրվելու ներկա լինել: Անվտանգության աշխատակիցները համոզված չեն, որ կկարողանան մարզային դատարանում ապահովել անվտանգությունը, շենքի մեծ չափերի պատճառով: Ելնելով դրանից, դատական կոլեգիայի նրստաշրջանները կանցկացվեն Ռոստովի շրջանային դատարաններից մեկում: Դրանից բացի, վտանգ կա, որ մեղադրյալների զորընկերները կփորձեն զինված հարձակման միջոցով առեւանգել նրանց: Անվտանգության նկատառումներով դատավոր Լեոնիդ Ակուրջանովին անձնական զենք կհատկացվի: ■

# Թմրավաճառը կալանվեց

Երեւում է Կոլումբիայի նարկոմաֆիայի դափնիները հանգիստ չեն տալիս նաեւ թմրանյութերի տեղական վաճառականներին: ՆԳՆ «02» մամուլի կենտրոնը հայտնեց, որ ՀՀ ՆԳՆ քրեական հետախուզության վարչության 43-րդ օպերատիվ հականերգործման բաժնի աշխատակիցները մայրաքաղաքի բնակիչ 29-ամյա Արմեն Տաճատյանից «Զվարթնոց» օդանավակայանում բռնագրավել են 12 կգ կոկնար տեսակի թմրանյութ, պատրաստի թմրանյութով 1 ներարկիչ, նյարդային համակարգի վրա ազդող գազի արվակ: Անտվոր այս բեռի դիմաց, որը տեղ էր հասցվել Վիլնյուս-Գրոզնի-Երեւան ուղերթը կատարող ԱՀ-40 ինքնաթիռով, արկածախնդիր ուղեւորը հավանաբար կլորիկ գումար էր ակնկալում: Նրա համար կարեւոր մի բան, որը հաշվի չառան ՆԳՆ աշխատակիցները:

Հանցագործը ձերբակալված է: Նրա դեմ քրեական գործ է հարուցվել: ■

# Բուրբուլիսը Կրեմլում հանդիպեց «Հարուստների» հերոսուհու հետ

Երեկ Կրեմլում Ռուսաստանի նախագահին կից պետական քարտուղար Գենադի Բուրբուլիսն ընդունեց մեքսիկացի դերասանուհի Վերոնիկա Կաստրոյին՝ հեռուստատեսությամբ ցուցադրվող «Հարուստներն էլ են լալիս» բազմասերիանոց կինոնկարի գլխավոր դերակատարին: Բուրբուլիսը հանդիպել էր դերասանուհու հետ որպես ընտանիքի միջազգային տարվա կազմակերպման՝ Ռուսաստանի ազգային կոմիտեի նախագահ: Հանդիպման ժամանակ նա ասաց Վերոնիկա Կաստրոյին, որ նրա ստեղծած կերպարը ծառայում է ընտանիքի ամրապնդմանը: Զրույցին մասնակցող փոխվարչապետ Միխայիլ Պոլտորանինի նախաձեռնությամբ դերասանուհուն նվիրեցին «Պսկովյան արքայադստերներ» ալբոմը: ■

# Ռուսաստանը Թուրքիային 300 մլն. դոլարի զենք

Թուրքիայի ներքին գործերի նախարար Իսմեթ Սեզգինը հայտարարել է, որ երկու երկրների միջեւ ռազմական համաձայնագրերի մի ամբողջ փաթեթ է նախատեսվում, հայտնել է «Էկոնոմիստ»-ը: Նախատեսվում է գնել առաջին հերթին ուղղաթիռներ եւ զրահամեքենաներ: Ռուսաստանը համաձայնել է Անկարային զենք վաճառել երրորդ կողմին չտալու պայմանով: ■

# Սեփականաշնորհում ըստ Վեդի ավանի

Սեփականաշնորհման պտուղներից «հմտորեն» են օգտվել Արարատի շրջանի Վեդի ավանի եւ նրա հարակից գյուղերի որոշ բնակիչներ: Այժմ խիստ անհրաժեշտ խաղողի, բանջարեղենի փոխարեն նրանք ձեռնամուխ են եղել այլ կուլտուրայի՝ կանեփի մշակմանը:

Ըստ «02»-ից ստացված տեղեկությունների, օրերս տեղի ՆԳ աշխատակիցների անցկացրած միջոցառումների շնորհիվ հայտնաբերվել են 1800 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով այդպիսի ցանքատարածություններ: Այդ նորաբույս «գյուղատնտեսների» աղօրինի ցանքերից արմատախիլ է արվել 600 կգ կանեփ: Հանցագործներից առգրավվել է 8 կգ պատրաստի հաշիշ: ■

# Աֆղանստանը Ռուսաստանի կենսական շահերի ոլորտում է

«Աֆղանստանը կար եւ մնում է Ռուսաստանի կենսական շահերի ոլորտը», սեպտեմբերի 7-ին հայտարարեց Ռուսաստանյան Դաշնության արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւը: Նա հանդիպում է ունեցել Աֆղանստանում Ռուսաստանի դեսպանատան աշխատակիցների եւ այնտեղից նրանց էվակուացմանը մասնակցած զինծառայողների հետ: Դրա հետ մեկտեղ, նախարարը նշեց, որ Ռուսաստանը *«հրաժարվում է այդ շրջանում ԱՄՆ-ի հետ հակամարտությունից եւ կենսական շահերի կայսերական մենաշնորհությունից»*: Նրա խոսքերով, Ռուսաստանի՝ այդպիսի շահերի ոլորտ են մտնում ոչ միայն Աֆղանստանը, այլեւ Տաջիկստանը *«եւ Ասիայի այլ շրջաններ»*: Ռուսաստանը եղել է եւ պետք է մնա հզոր պետություն, գտնում է Կոզիրեւը:

Նա հավաստիացրեց հավաքվածներին, որ Ռուսաստանի դեսպանատունը կրկին կբացվի Աֆղանստանում *«հնարավորություն ստեղծվելուն պես»*: ■

# Ալեքսի 2-րդը հակամարտ կողմերին

Մոսկվայի եւ Համայն Ռուսիոյ պատրիարք Ալեքսի 2-րդը գտնում է, որ Աբխազիայում ստեղծված իրավիճակի կարգավորման համար անհրաժեշտ է դուրս հանել հակամարտությանը մասնակցող բոլոր զորքերն Աբխազիայից, զինաթափել ռազմական գործողություններին ներգրավված կամավորներին եւ անմիջապես սկսել բանակցությունները: Աբխազ պատգամավորներին հղած հեռագրում պատրիարքը նշում է, թե անհրաժեշտ է դադարեցնել «եղբայրասպան պատերազմը»: Աբխազիայի կարգավիճակի հարցը պետք է լուծել այնպես, *«որ ոչ մի բնակիչ, լինի արխազ թե այլազգի, չտուժի եւ վայելի հաղթահարական բոլոր իրավունքները»*: ■


ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ
DIAGNOSTICA

Դիմեք մեր բժշկական կենտրոններին, եւ Ձեր առողջությունը հուսալի ձեռքերում կլինի:

Երեւան, Աջափնյակ, Մարգարյան փ. 6,
հեռ. 35-01-58, 35-13-01
Քանաքեռ, Ֆանարջյան փ. 55,
հեռ. 28-75-24,
կենտրոն, Թումանյան փ. 23, հեռ. 53-85-81
Գյումրի, Շչեդրինի 54ա, հեռ 3-60-72
Գորիս, Մաշտոցի փ. 3, հեռ. 2-26-87

ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

☛ Առաջարկում է հիվանդությունների ախտորոշման բարձրագույն մակարդակ:

☛ Առաջարկում է ձեր առողջությունը ողջ կյանքի ընթացքում:

☛ Միայն մեզ Դուք կարող եք դիմել բոլոր հիվանդությունների դեղորում եւ բոլոր բժշկական հարցերով, քանի որ «ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ»-ն ոչ միայն միջազգային պահանջներին համապատասխանող ամենաժամանակակից սարքերն ու մասնագետներն ունի, այլեւ անհրաժեշտության դեպքում Ձեր բուժօգնությունը կազմակերպում է հանրապետությունից դուրս կամ համապատասխան մասնագետներ է հրավիրում:

☛ Միայն մեզ մոտ Դուք կարող եք ստանալ Ձեր ախտորոշումը կամ արդիականացրել առողջությունը կայուն եւ ցածր գներով, անկախ ցույց տրվող բուժօգնության ծավալից եւ տեսակներից:

☛ Մենք ընդունում ենք բժիշկների տնային կանչեր (հեռ. 35-70-38) Դուք կարող եք անցնել հետազոտությունները ավելի արագ եւ հանգիստ մթնոլորտում, եթե դիմեք մեզ ժամը 14.00-ից հետո կամ շաբաթ օրերը ժամը 9.00-ից մինչեւ 15.00:

☛ Ձեր հարմարության համար մենք աշխատում ենք ամեն օր (բացի կիրակի օրից), ժամը 8.30-ից մինչեւ 19.00, շաբաթ օրը՝ մինչեւ 15.00:

PUBLISET


## Լուրերի հոսք

### Նաբիեւը չի մեռել

Երեկ Դուշանբեում պետք է տեղի ունենար Տաջիկստանի Գերագույն խորհրդի արտակարգ նստաշրջանը, սակայն այն անորոշ ժամանակով հետաձգվել է: Ինչպես հաղորդեցին «ԻՏԱ»-ի թղթակցին խորհրդարանի քարտուղարությունում, պատգամավորներն ազատ են արձակվել անորոշ ժամանակով: Դուշանբեի աղբյուրները չեն բացառում, որ հանրապետության նախագահ Ռահմոն Նաբիեւի հրաժարականը եւ պետության ղեկավարի լիազորությունների հանձնումը Գերագույն խորհրդի նախագահ Ակբարշո Իսկանդարովին կհանգեցնեն այն բանին, որ նստաշրջանն ընդհանրապես չի կայանա: Մինչդեռ, Տաջիկիստանի խորհրդարանի պատգամավորական անձնիկ «ԻՏԱ»-ի թղթակցի հետ զրույցի ժամանակ կտրականապես հերքել են Ռ. Նաբիեւի մահվան մասին նախօրեին տարածված ասեկոսները, գնահատելով դրանք որպես սադրանք: Ինչպես արդեն հաղորդել ենք, սեպտեմբերի 7-ին Տաջիկստանի նախագահը ստորագրել է հրաժարականի մասին դիմումը, որն ավելի ուշ ընդունվել է Գերագույն խորհրդի նախագահության կողմից: ■

### Նախագահից ոչ ավել

Երկուշաբթի օրը Կիեւում Ուկրաինայի Գերագույն խորհուրդը ընդունել է որոշում, ըստ որի պետական պատասխանատուների աշխատավարձը չպետք է գերազանցի նախագահի ստացածին: Լեոնիդ Կրավչուկի աշխատավարձը այժմ կազմում է 19 հազար ուկրաինական կուպոն: ■

### 1 դոլարը 207,9 ռուբլի

Մոսկովյան միջբանկային վալյուտային բորսայում երեքշաբթի օրը կայացած սակարկություններում ռուբլու կուրսը կազմել է մինչեւ 207,9 ռուբլի մեկ դոլարի դիմաց, այն դեպքում, երբ սեպտեմբերի 3-ին այն կազմել էր 210,5 ռուբլի: Վաճառվել է 43 միլիոն 850 հազար դոլար, նախնական պահանջարկն էր 33 միլիոն 730 հազար դոլար, իսկ առաջարկը՝ 53 միլիոն 720 հազար դոլար: ՄՄՎԲ-ի փորձագետների կարծիքով, այս սակարկությունները վերջ տվեցին վալյուտա վաճառողների այն կասկածներին, թե սպասվում է ռուբլու կուրսի հետագա անկում: Նրանք կարծում են, որ վաճառվող վալյուտայի քանակի հետագա մեծացումը կնպաստի ռուբլու կուրսի կայունացմանը: ■

### Մուջահեդներից փախչելով

Սահմանապահները Թուրքմենստան մուտք գործելիս ձերբակալել են ութ աֆղանական թուրքմենների, որոնցից առգրավվել է 32 կգ հին զարդեղեն եւ 1,5 միլիոն աֆղանի: Նրանք հայտարարել են, որ փախչում են մուջահեդ-փուստուններից: ■

*Լուսերը interfax-ի «Մոսկվա», «Նոյան տապան» եւ մեր թղթակիցների*


Ազգ

Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

*Գլխավոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ

*Խմբագիր*
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ

*Տնօրէն* ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ

52.16.35 գլխ. խմբ.
58.18.41 խմբագիր
56.28.63 տնօրէն

Apple® Macintosh® համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի



Azg Daily, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010 | Editor H. AVEDIKIAN | ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2 | Գրանցման թիւ 65 | Տպաքանակ 20 000 | Ստորագրուած է տպագրութեան | Դասիչ 69149 | Պատուէր 1538 | 8.09.1992


digitised by A.R.A.R.@